

Ռուս դիւանագետը թեժ աշուն կը նախատեսէ Հայաստանի մէջ՝ կողմնորոշման առումով

Հայաստանի մօտ Ռուսաստանի դեսպանատան առաջին քարտուղար Ալեքսանդր Վասիլեւ մասնակցելով «Դէպի Եւրասիական Միութիւն» խորագրով կտր սեղանին, անդրադարձած է Հայաստանի կողմից Եւրոպայի հետ Ընկերակցութեան համաձայնագրի նախատրագրման մտադրութեան, ու յայտարարած է, որ քաղաքական կողմնորոշման ընտրութեան առումով թէժ աշուն կը սպասուի:

«Կարծում եմ որ ընտրութիւնը կը կայացուի եւ կը կայացուի ճիշդ», - ըսած է ռուսաստանցի դիւանագետը: Այս մասին կը տեղեկացնէ հայաստանեան «168 Ժամ» թերթի կայքէջը:

«Հասարակութիւնը բանավիճում է ինտեգրացիոն ուղղութեան առումով: Շատերը ԶԼՄ-ների միջոցով փորձում են ներկայացնել, թէ երկու կողմերը՝ Եւրասիական Միութիւնն ու Եւրամիութիւնը, ոչ թէ միմեանց հակասում են, այլ լրացնում: Բայց մենք իրականում տեսնում ենք միանգամայն այլ բան: Արեւմտեան գործընկերները, որոնց հետ մենք էլ շփուում ենք, երբեմն

թոյլ են տալիս իրականութիւնը չարտայայտող երեւոյթներ: Եկէք չմոռանանք լեհ ներկայացուցիչների ելոյթները, ովքեր ասացին, որ «եւ, եւ»-ի տարբերակը անհնար է եւ պէտք է ընտրել, շարժուել «կա՞մ, կա՞մ»-ով», - յայտարարած է Ռուսաստանի Դաշնութեան դեսպանատան ներկայացուցիչը:

Ան նաեւ ըսած է, որ մտահոգի է Ընկերակցութեան Համաձայնագրի բովանդակութեան գաղտնիութիւնը եւ աւելցուցած. «Համաձայնագրի բովանդակութիւնը ընդհանրապէս ոչ մէկը չի տեսել ու կասկածի տակ է առնում այն հանգամանքը, թէ այդ ինչ պայմաններ են ներառուած, որ իրենք թաքցնում են հասարակութիւնից: Չինովնիկներ, դիւանագետներ կան, ովքեր այս առումով սկսում են ենթադրել, որ համաձայնագրի ստորագրման մէջ կոշտ պայմաններ կան, որոնք աւելի խիստ են դրուած, քան նախորդ պետութիւնների առջեւ: Ակնյայտ է, որ կան սահմանափակումներ: Սա մեզ մտահոգում է, չնայած հայ հասարակութիւնը պնդում է, որ

Շարք էջ 4

Հայաստանի մէջ հասարակական բողոքի ալիքը կը շարունակուի



Բախումներ ռուսական զինուորի միջեւ

Հայաստանի մէջ ամիսներէ ի վեր շարունակուող հասարակական բողոքի ալիքը կը շարունակուի, հակառակ ռուսականութեան կողմէ կատարուող ձեռքարկութիւններուն եւ ճնշումի այլ միջոցներուն: Վերջին օրերուն բողոքի թատերաբեմ դարձած է Երեւանի Կոմիտաս 5 հասցէին վրայ կատարուող շինարարութիւնը: Նոր շէնքի կառուցման դէմ պայքարող մօտակա շէնքերու բնակիչները կը շարունակեն շինութեան հրապարակը պահել իրենց հսկողութեան տակ:

Կոմիտաս 5 հասցէի մօտակա շէնքերու բնակիչները կը պնդեն, որ այդ նեղ տարածքին վրայ

կարելի չէ շէնք կառուցել, քանի որ շէնքը կը փակէ հրշէջ եւ շտապ օգնութեան մեքենաներու մուտքը, կը փակէ իրենց տուններու լուսաւորութիւնը, եւ որ շէնքի տակ պինդ ժայռ է, զայն փորձելով կտորել, կը ցնցեն իրենց տուններու հիմքերը:

Լարուածութիւնը յատկապէս մեծ էր անցնող շաբաթավերջին, երբ բնակիչներն ու հասարակական ակտիւիստները մի քանի անգամ փակեցին փողոցը, բախումներ եղան ցուցարարներուն ու իրաւապահներուն միջեւ եւ աւելի քան երկու տասնեակ ցուցարարներ բերման ենթարկուեցան:

Շարք էջ 4

Ամերիկայի դեսպանի կարծիքով՝ Ապրիլի 24-ի կապակցութեամբ Օպամայի յայտարարութիւնը որեւէ փաստ չի հերքեր

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի ամենամեայ յայտարարութիւնը՝ կապուած Ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանութեան գոհերու չիշտակման հետ, ուժեղ յայտարարութիւն է, որ որեւէ փաստ չի հերքեր: Այս մասին յայտարարած է Երեւանի մօտ Ամերիկայի դեսպան Ճոն Հէֆֆերն՝ «ԵՏՅ» համալսարանի «The Politic» ամսագրին տուած հարցազրոյցին մէջ:

«Այնտեղ յատկ ըսուած է, որ Օպաման կայսրութեան վերջին օրերուն, 1.5 միլիոն հայ սպանուած է: Յայտարարութիւնը կը վկայակոչէ այդ գործողութիւնները՝ որպէս 20-րդ դարու ամենավաղագ գազանութիւններէն մէկը: Յայտարարութիւնը կը ճանչնայ փաստերը եւ մեր կարծիքով, անոր մէջ փաստերու վերաբերեալ վիճելի հարցեր չկան», - ըսած է դեսպանը:

Ճոն Հէֆֆերնի կարծիքով, ԱՄՆ կառավարութիւնը ունի այդ իրադարձութիւններու համար քաղաքական որոշում, որ կը ներառէ շարք մը իրաւական եւ քաղաքական գործօններ, որոնցմէ մէկը Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորումն է: «Բնականաբար, Հայաստանին պէտք է Թուրքիոյ հետ բաց սահ-



Երեւանի մօտ Ամերիկայի դեսպան Ճոն Հէֆֆերն

ման: Մասնակի մեկուսացումը մեծ վնաս կը հասցնէ պետականութեան ու տնտեսութեան: ԱՄՆ-ի քաղաքականութիւնը ուղղուած է Հայաստանի եւ Թուրքիոյ հաշտեցման: Այդ նպատակով նախագահը եւ նախկին ու ներկայիս պետական քարտուղարները կ'ընտրեն եւ կ'օգտագործեն այնպիսի բառեր, որոնք, ինչպէս իրենք կը խորհին, կը նպաստեն հաշտեցման», - շեշտած է դեսպանը, մեկնաբանելով Օպամայի Ապրիլի 24-ի վերաբերեալ ամենամեայ յայտարարութեան բառերու ընտրութիւնը:

Հայ զոհեր Դամասկոսի մէջ

Դամասկոսի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ու անոր շրջակայքին վրայ ինկած են քանի մը ռումբեր: Պայթումներուն հետեւանքով մահացած է Յակոբ Սարգիսեանը, վիրաւորուած եւ հիւանդանոց փոխադրուած են Ռաֆֆի Ճապրեանը եւ առաջնորդարանի պահակ Թորոս Սարգիսեանը:

Նիւթական վնասներ կրած են եկեղեցին եւ վարժարանը: Փշրուած են առաջնորդարանի շէնքի ապակիներուն մէկ մասը:

Դամասկոսի թեմի առաջնորդ Արմաշ Եպս. Նալպանտեան պայթումի պահուն գտնուած է առաջնորդարանի համալիրէն դուրս, սակայն վերադարձած է եւ վերահսկած՝ վնասներու արժեւորման աշխատանքները:

Դամասկոսի Տուէլաա շրջանին մէջ վիրաւորուած է նաեւ Ժիրայր Թովմալեանը:

Միւս կողմէ, «Ազատութիւն» ռատիոկայանը կը տեղեկացնէ որ, Հայկալի մէջ ապրող սուրիահայերը սկսած են նախապատրաստուիլ Ամերիկեան հաւանական հարուածներուն: Կը պատրաստուին շէնքերու նկուղները ծառայցեցնել որպէս ապաստարան, ուր կը պատսպար-

ուին հրթիռներու հարուածներէն ու ռմբահարումներէն:

Հայկալի մէջ տպագրուող Գանձասար ամսագրի աշխատակից Զարմիկ Պողիկեան ռատիոկայանին փոխանցած է թէ, համայնքը խուճապի չէ մատնուած: Ան ըսած է, որ եթէ նոյնիսկ սուրիահայերը ցանկութիւն ունենային այս օրերին լքել երկիրը, ապա, միեւնոյն է, այդ կարելի չէ: Հայկալը արտաքին աշխարհին կապող բոլոր ճանապարհները վտանգուած են: Օղանաւակայանը ամիսներէ ի վեր փակ է, իսկ ցամաքային ճանապարհները կամ ընդդիմադիրներու հսկողութեան տակ են եւ կամ ալ պատերազմական գործողութիւններու կեդրոնն են:

«Հայկական համայնքը մտահոգ է: Հայ համայնքի ղեկավարները կոչ կ'ընեն զգոյշ ըլլալ եւ շատ դուրս չգալ այս օրերուն», - ըսած է Պողիկեան:

Ըստ «Ազատութիւն» ռատիոկայանի, Հայաստանի մէջ գտնուող սուրիահայերը անհանգստացած են Հայկալի մէջ մնացած հարազատներուն համար: Անոնց միակ յոյս այն է, որ Ամերիկեան նման քայլի չի դիմեր:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՕԼԻԳԱՐԻԻԱՆ ՎՏԱՆԳ Է ԶԳԱՑԵԼ

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Քաղաքապետարանի մօտ ընդդեմ իշխանութեան անօրինականութիւնների եւ քաղաքային չինովնիկների հրաժարականի պահանջով ակցիաներ անող երիտասարդները նոր «թշնամի» ունեն: Դրանք նույն այդ չինովնիկների ու նրանց երեխաներն են, որոնք անօրինական որոշումներ են ընդունում:

Հայաստանում քաղաքացիական պայքարը սկսում է դասակարգային բնույթ ստանալ, բայց քանի որ դասակարգեր այդպէս էլ չեն ձեւաւորուել, ամէն ինչ վերածուում է կենցաղային սկանդալների: Հայաստանում իշխող խմբաւորումը, որն այդպէս էլ չի հասցրել ձեւաւորուել որպէս ազգային արիստոկրատիա, զգում է մօտալուտ կրախը: Եթէ փողոց են դուրս եկել հարստացած չինովնիկների երեխաները, նշանակում է նրանց տներում սկսել են խօսել մօտալուտ վտանգի մասին:

Այս «դասակարգը» զգացել է վտանգը, երբ մարդիկ սկսել են հարցումներ ուղարկել համապատասխան մարմիններ՝ պարզելու համար նրանց հարստութեան ծագումնաբանութիւնը: Որտեղից միլիոնները, հարցնում են մարդիկ, իսկ չինովնիկները պատասխան չունեն: Չեն օգնում փաստաթղթերը, որոնք սկսել են «անհետանալ»: Չի օգնում դատարանը, որտեղ ներկայում քննում են գործեր՝ կապուած մի քանի օլիգարխների հետ:

Հայաստանի օլիգարխիան զգացել է վտանգը, որն աւելի ու աւելի է մօտենում: Հայաստանը պոկուում է կայսրութիւնից, որը 300 տարի

ապրում էր այն օրէնքներով, որտեղ իշխանութիւնն ու փողը միշտ եղել են նոյն ձեռքերում, որտեղ ինտելեկտուալներն ու հայրենասերները դիսիդենտներ էին, իսկ իշխանութեան էին նրանք, ովքեր սիրում են լսել «հայրենասիրական» ռաբիս:

Կայսրութեանը փոխարինելու են գալիս այլ արժէքներ, եւ դրանք կրում են քաղաքացիական շարժումները: Նրանք մերժում են ռաբիսը որպէս արժեհամակարգ, եւ սիրում են երաժշտութիւն, որը ստեղծուած է մարմնի վերին մասի համար, նրանք չեն ընդունում իշխանութիւնը յանուն փողի, եւ փողը՝ յանուն իշխանութեան:

Օլիգարխիան առաջինն է զգացել այս սպառնալիքը եւ ներկայում փորձում է որքան հնարաւոր է շատ պոկել հանրութիւնից, լիցենզիաներ ստանալով հետին ամսաթուով եւ «կարգի բերելով» փաստաթղթերը: Օլիգարխների երկրորդ սերունդը, որը նոյնպէս չհասցրեց դառնալ արիստոկրատիա, միացել է հայրերին:

Նրանք առայժմ զարմանում են, երբ ինչ որ մէկը նրանց վրայ ձայն է բարձրացնում եւ հարցեր տալիս: Շատ տարիներ նրանք անպատիժ ծեծել են իրենց հասակակիցներին, զբաղուել ռեկեսով, «նայողներ» նշանակել բանակում, սերտ յարաբերութիւններ ունեցել իրաւապահների հետ: Սակայն ամէն ինչ փոխուում է:

Գալուստ Սահակեանն, օրինակ, խօսելով ակցիաների մասնակիցների մասին, ասել է, որ եթէ իշխանութիւնը ցանկանար՝ մէկ գիշերուայ մէջ կը ցրէր բոլորին: Չի ցանկացել, թէ չի կարողացել: «ԼՐԱԳԻՐ»

ԻՆՉՈՒ ՄԵՋԱՆՈՒՄ ԶԿԱՆ ՏԻԿՆԻԿՆԵՐ

ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Վերջին օրերին ռուսաստանեան մամուլի առաջնահերթ թեմաներից մէկն է դարձել քրէական գործը, որը գլխաւոր դատախազութիւնը յարուցել է HTB հեռուստաընկերութեան դէմ «Տիկնիկներ» հաղորդաշարի համար: Դատախազութիւնը ցանկանում է պարզել՝ արդեօք բարձրագոյն պետական այրերին նմանակող տիկնիկները իրենց խօսքով ու վարքով վիրաւորում են սոյն այրերի արժանապատուութիւնը: Թերթերը բերում են զարգացած երկրների օրինակը, որտեղ ստանամեակներ շարունակ ցուցադրուում են նման հաղորդումներ, սակայն դրանց նկատմամբ երբեք ոչ մի հայցադիմում չի ստացուել:

Դժուար թէ Ռուսաստանի նախագահը կամ վարչապետը անձամբ էին գայրացել «Տիկնիկներ» վրայ եւ հրահանգ տուել քրէական հետապնդում կազմակերպել: Ամենայն հաւանականութեամբ, դա մերձաւոր պալատականների ծառայողական անսպառ ջանասիրութեան արգասիքն է:

Բնականաբար, գայթակղութիւն կայ գուգահեռներ անցկացնելու մեր երկրի միջեւ: Հայաստանում բոլոր թեւերի քաղաքական գործիչները շատ աւելի նեղացկոտ են եւ բռնկուում: Այստեղ իրենց դերն են խաղում մի շարք հանգամանքներ: Նախ՝ հարաւային կրակոտ հոգեխառնուածքը: Այնուհետեւ՝ երկրի տարածքային ծաւալը. համարեա բոլորն իրար անձամբ ճանաչում են, եւ եթէ ոչ

«ծաղրանկարի» հերոսի, ապա նրա հօրեղբօր տղայի հետ անպայմանօրէն մի բաժակ սուրճ խմել են՝ դա չափազանց կաշկանդող հանգամանք է: Եւ երրորդ՝ ամենախորքային պատճառը. լուրջ գաղափարական, քաղաքական հակասութիւնների բացակայութեան պատճառով մեր վերնախաւը ստիպուած է կենտրոնանալ գրեթէ կենցաղային մակարդակի բանավէճի վրայ, եւ այդ պայմաններում մամուլում կամ եթերում ամէն մի բառից յետոյ անհրաժեշտութիւն է ծագում կատարուող կաթիլներ ընդունել: Չունենալով լուրջ զբաղմունք՝ մեր քաղաքական գործիչները ձեռնամուխ են լինում խարդաւանքների, սաղրանքների եւ դաւադրութիւնների, հոգեբանական համակարգի ստեղծմանը՝ ամէն ինչի մէջ փնտռելով բազմաշերտ ենթատեքստեր: (Դա ամենից շատ յատուկ է ՀՀԾ-ից անջատուած բեկորներին): Դե, հիմա եկէք սարքէք ու խօսեցրէք մեր քաղաքական գործիչներին նմանակող տիկնիկներին: Փոխազդեցութիւնը կարող է հետեւեալը լինել. այրերը օրական մի քանի հայցադիմում կ'ուղարկեն դատարաններ (քաղաքակիրթ տարբերակ), կը վառեն հեռուստատեսային ստուգիան կամ նրա ղեկավարի խորտիլակը (ասիական տարբերակ) կամ կը ստանան սրտի նտպա (ողբերգական տարբերակ): Ահա թէ ինչու մեր հեռուստատեսութիւնում չի ստեղծուում «Տիկնիկներ» հաղորդաշարը: Խնայում են մեր գործիչների փխրուն նեարդային համակարգը: «ԱՌԱՒՕՏ»

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԴԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

ՄԱՐԳՆՄԱՆԵԱՆ

Այն, որ Հայաստանի բնակչութեան առնուազն 90 տոկոսը դժգոհ է իշխանութիւններից՝ ակնյայտ է, բայց այդ 90 տոկոսի ներսում միակարծութիւն չկայ՝ Մի մասը գտնում է, որ երկրում արմատական փոփոխութիւններ են պէտք (այսինքն՝ իշխանափոխութիւն), միւս մասը գտնում է, որ ճնշումների միջոցով հնարաւոր է իշխանութիւններին ստիպել, որ հենց իրենք «խելքները գլուխները հաւաքեն» եւ ինչ-որ սոցիալական խնդիրներ լուծեն:

Զուտ ապահովութեան եւ կոմֆորտի տեսանկիւնից միայն սոցիալական խնդիրներ բարձրացնելն, իհարկէ, նախընտրելի է: Երբ մարդիկ իշխանափոխութիւն են պահանջում, իշխանութիւնները նրանց դէմ ոստիկանական զօրքեր են հանում, զրահատեխնիկայ, «սպեց-նազ», ուղիղ նշանառութեամբ կրակում են եւ այլն, իսկ սոցիալական խնդիրներ բարձրացնողների դէմ առաւելագոյնը մի տասը-տասնհինգ հաստավիզ ոստիկան են հանում, ժամանակ առ ժամանակ մի քանի հոգու մի երկու ժամով տանում ոստիկանութիւն ու բաց թողնում, եւ դրանով էլ ամէն ինչ աւարտում է:

Հիմա փորձենք հասկանալ միայն սոցիալական պահանջներ առաջ քաշողների տրամաբանութիւնը: Քաղաքական առումով նրանք խօսելու տեղ չունեն, որովհետեւ մի 10-15 տարի առաջ, երբ խօսում էր այն մասին, որ Հայաստանը չի կարող երկար դիմանալ շրջափակման եւ չկարգաւորուած հակամարտութեան պայմաններում, ի վերջոյ յաղթեց այն տեսակէտը, որ դա բնաւ կապ չունի՝ Հայաստանը դեռ հարիւր տարի էլ այս պայմաններում կը զարգանայ: Նրանք էլ «ըմբռնումով մօտեցան» ու իրենք իրենց տոկոսութեամբ ու անձնագոհութեամբ հիացած գնացին տուն՝ «եւս հարիւր տարի զարգանալու»: Ահոս՝ չստացուեց: Պարզուեց՝ «եւս հարիւր տարի զարգանալ» ասելով իշխանութիւնները միայն իրենց սեփական բիզնեսները նկատի ունէին: Բայց սոցիալական խնդիրներ բարձրացնողները հիմա էլ են ըմբռնումով մօտենում իրավիճակին: Եւ նրանց հիմնական դժգոհութիւնն այն է, որ Հայաստանի ծանր վիճակը միայն իրենց վրայ է ազդում, բարձրաստիճան պաշտօնեաների վրայ չի ազդում: Պարզ ասած՝ նրանք չեն ասում «ինչու ենք մենք աղքատ», նրանք ասում են «բա ինչու էք դուք հարուստ»: Հարցադրումն, իհարկէ, ճիշդ է, որովհետեւ ցանկացած բարձրաստիճան պաշտօնեայի հարստութեան հետեւում քրէական օրէնսգրքի առնուազն 7-8 յօդուած կայ: Բայց հարց է ծագում՝ այդ ի՞նչ տրամաբանութեամբ են պահանջում, որ 15 տարի շարունակ երկիրը թալանածները յանկարծ վերադատարակուեն ու իրենց յօժար կամքով հրաժարուեն թալանից:

Ի դէպ, բարոյականութեան տեսանկիւնից նոյնպէս միայն սոցիալական պահանջներ առաջ քաշելը, մեղմ ասած, խոցելի է: Դրանից սովորական առեւտրի կամ շանտաժի հոտ է գալիս: Այսինքն՝ դու գիտես, որ դիմացինը յանցագործ է, բայց ասում ես «կոնկրետ իմ հարցերը լուծիր՝ սուս մնամ»: Ցա-

ւօք՝ Հայաստանում սա շատ տարածուած է: Ընտրութիւնների ժամանակ էլ էր այդպէս: Ամբողջ գիւղերով հաւաքուած-ասում էին «մեր գիւղի ճամբան սարքիր կամ սալարկայի հարցը լուծիր՝ քեզ կ'ընտրենք, չէ՛ ուրիշին ենք ընտրելու»: Կամ մեր շէնքի տանիքը նորոգիր՝ հարիւր տոկոսով քեզ կ'ընտրենք, կամ աւելի պարզ՝ «ախպեր, տասը հազար դրամը տուր՝ ընտրենք»: Եւ թող ունէ մէկը պնդի, թէ սրանք նոյնպէս սոցիալական պահանջներ չէին: Արդիւնքը տեսնում ենք. ընտրութիւններն աւարտուեցին թէ չէ՛ ամէն ինչ միանգամից կտրուկ թանկացաւ: Ու հիմա նորից գտնուում են մարդիկ, ովքեր միայն սոցիալական խնդիրներ են բարձրացնում: Ինչ էլ պոկեն՝ «քիար ա»:

Իսկ իշխանութիւններին դա ձեռնտու է: Ինչո՞ւ: Որովհետեւ քանի դեռ հասարակութեան դժգոհ հատուածի մի մասը միայն սոցիալական խնդիրներ է բարձրացնում, «արմատական պահանջներով» հօր ալիքը յետաձգում է: Իշխանութիւններն էլ մտածում են «ինչքան ժամանակ ձգենք՝ քեար ա»: Ուշադրութիւն դարձրէք՝ շատ կոնկրետ «քեար». ամենահամեստ հաշուարկներով՝ օրական 10-12 միլիոն տոլար: Իսկ դրա համար, համաձայնուէք, արժէ պառակտել քաղաքական ուժերին, ազատամարտիկներին, ակտիւստներին, մի խօսքով՝ ինչ հնարաւոր է: Ու այդ ընթացքում՝ նաեւ ծիծաղել նրանց վրայ: Ճիշդ այնպէս, ինչպէս հարկադիր բուժման ենթակայ թմրամոլը կը ծիծաղէր, եթէ բուժելու փոխարէն նարկոտիկ սպաններ իշխանութիւնները բողոքի ցույց անէին իր շուրջը եւ պահանջէին ինքնակամ նուազեցնել օրական դոզան:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԳԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԱՅՈՒՆԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մեղաւոր են եւ՝ ընդդիմութիւնը, եւ՝ իշխանութիւնը»



Անուշ Սեղրակեանը պատգամաւոր Մանուէլ Բաղէեանը քանակէքի ընթացքին

«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան փոխնախագահ Անուշ Սեղրակեանը եւ ԱԺ «Հանրապետական» խմբակցութեան պատգամաւոր Մանուէլ Բաղէեանը քաղաքական եւ քաղաքացիական զարգացումները Հայաստանում թեմայի շուրջ բանավէճի ընթացքում յանգեցին եզրակացութեան, որ երկրում տիրող ներկայիս իրավիճակի համար մեղաւոր է եւ՝ ընդդիմութիւնը, եւ՝ իշխանութիւնը:

Մանուէլ Բաղէեանի խօսքով՝ չի կարելի միանշանակ սահմանել քաղաքացիական շարժումը եւ նրա պատճառները:

«Յամենայնդէպս, կը նշեմ գործոններ՝ ինչով է պայմանաւորուած ակտիւութիւնը: Մէկը խորը հիասթափուած է ընդդիմադիր քաղաքական ուժերից, որոնք պէտք է կարողանային ինչ-որ հատուածի խնդիրները ներկայացնել եւ շահերը պաշտպանել, բայց չեն կարողացել: Հասարակութեան ակտիւութիւնը նաեւ արգասիքն է հասունացման,- ասաց նա»:

Նրա խօսքով՝ իշխանութիւնը լիովին չի բաւարարում որոշ շերտերի պահանջները կամ ոչ լիարժէք է նրանց հետ աշխատում:

«Խորքային պատճառները, գուցէ, աւելին են, սա, իհարկէ, մեր անտեսութեան, սոցիալական արդարութեան ոլորտում տիրող բարքերն են: Թէ՛ իշխանութիւնները, թէ՛ ընդդիմութիւնը այս ամէնին պէտք է նորովի մօտենան», - ասաց նա:

Անդրադառնալով սպասուելիք թէ՛ աշխան հարցին՝ նա աւել-

լացրեց. «Եթէ կարող էք թէ՛ աշուն անել, ուրեմն յայտարարէք ու արէք, եթէ չենք կարող, ձեզ մի վարկաբեկէք»:

Ըստ Անուշ Սեղրակեանի՝ քաղաքացիական այս ակտիւութեան փուլն արդէն սերտօրէն առնչուած է սոցիալական բռնտին:

«Նրա մասին խօսելիս մենք իրաւունք չունենք ընդդիմութեան անունը տալ, նրա ձեռքին չեն այն լծակները, որոնք հասցնում են ժողովրդին սոցիալական թշուառութեան», - ասաց նա:

«Ընդդիմութեանը գաղափարական ինչ-ինչ հարցերում, գուցէ, կարելի է մեղադրել, բայց ոչ այս պարագայում, քաղաքացիական գաղափարի կրող՝ ակտիւիստի փոխարէն: Երբ սիրում եմ իմ հայրենիքը, սիրում եմ իմ պետութիւնը, սակայն դա դեռեւս չի նշանակում, որ պիտի սիրեմ նաեւ իշխանութիւններին», - ասաց նա՝ նշելով, որ պետութիւնը պարտաւոր է պաշտպանել իր քաղաքացու շահերը:

Անդրադառնալով կոմիտասի 5 հասցեում ընթացող շինարարութեան դէմ վերջին օրերին տեղի ունեցող բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանութեան դրսեւորած պահուածքին՝ Անուշ Սեղրակեանը նշեց, որ իրեն յայտնի չէ, թէ ոստիկանութիւնն ում է սպասարկում:

Հարց ուղղելով Մանուէլ Բաղէեանին՝ Անուշ Սեղրակեանն ասաց. «Երբեք Հայաստանում այսքան սոցիալական խնդիրներ եղել են, երբեք ինքնասպանութիւնների թիւն այսքան շատ է եղել, ո՞վ է մեղաւոր դրա համար»:

Շուրջ 150 փաստաբաններ կը պաշտպանեն Արգիշտի Կիվիրեանի շահերը

Օգոստոսի 24-ին կոմիտաս 5 հասցեում շէնք կառուցելու դէմ բողոքի ակցիային մասնակցող աւելի քան երկու տասնեակ քաղաքացիներ, այդ թւում՝ Արգիշտի Կիվիրեանը, ոստիկանական մեքենաներով բերման էին ենթարկուել: Միջադէպից յետոյ ոստիկանութեան դասակի հրամանատարը զեկուցագիր էր գրել, թէ ոստիկանական մեքենայում Արգիշտի Կիվիրեանը բռնութիւն է գործադրել իր նկատմամբ, յարուցուել էր քրէական գործ՝ Քրէական օրէնսգրքի 316 յօդուածի 1-ին մասով՝ ոստիկանի նկատմամբ ոչ վտանգաւոր բռնութիւն գործադրելու կամ դրա սպառնալիքի յատկանիշներով: Այս յօդուածը նախատեսում է ազատագրուած մինչեւ 5 տարի ժամկետով: Կիվիրեանն Օգոստոս 28-ին

հրաւիրուել էր Յատուկ Քննչական Ծառայութիւն: Նրա հետ ՀԲԾ էին ներկայացել 30 փաստաբաններ: Նրանցից 3-ը՝ Փաստաբանների պալատի նախագահ Ռուբէն Սահակեանի գլխավորութեամբ, մօտ մէկ ժամ անցկացրեցին Յատուկ Քննչական Ծառայութիւնում՝ Արգիշտի Կիվիրեանի շահերի պաշտպանութեան հետ կապուած հարցերը քննարկելով քննիչ Լեւոն Մելքոնեանի հետ: Ինքը՝ Կիվիրեանը, ՀԲԾ չմտաւ:

«Մենք պահանջեցինք ծանուցագիր տալ: Մնացած հարցերը ծանուցագիրը Արգիշտի Կիվիրեանին փոխանցելուց յետոյ ինչպիսի որոշում ինքը կայացնի, այնպէս էլ կը վարուենք», - քննիչի հետ յանդիման մանրամասները ներկայացրեց Ռուբէն Սահակեանը: Նա

ՀՀԿ-ում քննարկումներ են սկսուել Սահմանադրական փոփոխութեան շուրջ

Հայաստանի իշխանութիւնները քննարկումներ են սկսել երկրի Սահմանադրութեան փոփոխութեան շուրջ, եւ չի բացառուած, որ քննարկումների արդիւնքում Հանրապետականում որոշում կայացուի՝ առաջարկել անցում կատարել խորհրդարանական հանրապետութեան: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այս մասին ասաց Ազգային ժողովի Պետական-իրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ, ՀՀԿ գործադիր մարմնի անդամ Դաւիթ Յարութիւնեանը:

«Քննարկումները ընթանում են բաւականին երկար ժամանակ», - ասաց Յարութիւնեանը՝ մանրամասնելով, որ 2005-ին ընդունուած Սահմանադրութեան ոչ բոլոր լուծումներն են այսօր համարուած բաւարար, - «Եւ այդ տեսանկիւնից կան տարբեր կարծիքներ, որ ժամանակն է անդրադառնալու Սահմանադրութեանը եւ կատարելու որոշակի փոփոխութիւններ: Կան որոշակի վտանգներ, որոնք մենք տեսնում ենք: Կարող եմ ասել, որ որոշումներ կայացնողների մօտ արդէն ձեւաւորուել է այն կարծիքը, որ Սահմանադրութեանը պէտք է անդրադարձ կատարել»:

Հանրապետականի գործադիր մարմնի անդամը նշեց, որ կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու հարցը վստահաբար քննարկման առարկայ դառնալու է, բայց յաւելեց՝ դա միակ մոդելը չէ, որը կը լինի

քննարկման առարկայ:

«Պէտք է խնդրին նայել այլ տեսանկիւնից. ո՞րն է առաւել արդիւնաւէտ Հայաստանի համար ստեղծուած իրավիճակում թէ՛ աշխարհաքաղաքական, թէ՛ ներքին քաղաքական», - մանրամասնեց Յարութիւնեանը, - «Եւ հենց այս տեսանկիւնից է, որ պէտք է լինեն շատ կարծիքների բախումներ, տարբեր մօտեցումներ, եւ դրա արդիւնքում, կարծում եմ, կը ձեւաւորուի հայեցակարգը»:

Նա չբացառեց, որ կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու դէպքում յաջորդ խորհրդարանական ընտրութիւններին Հանրապետականի համամասնական ցանկը կարող է գլխավորել ներկայիս նախագահ Սերժ Սարգսեանը եւ ՀՀԿ -ի յաղթանակի դէպքում Սարգսեանը կ'ընտրուի վարչապետ՝ արդէն այդ կարգավիճակով գլխավորելով Հայաստանը:

«Հանրապետականի ներսում դեռեւս որեւէ յստակ տարբերակ չի քննարկուել: Քննարկումները կը ծաւալուեն, երբ սկսեն հնչել առաջարկութիւններ: Ես չեմ բացառում նման տարբերակի քննարկում, ինչպէս նաեւ ցանկացած այլ տարբերակի քննարկում», - յաւելեց Յարութիւնեանը:

Դաւիթ Յարութիւնեան կարծիք յայտնեց, թէ քննարկումները կը տեւեն մի քանի ամիս՝ մինչեւ որոշակի հայեցակարգի ձեւաւորուելը, որը «Ամանորից շուտ չի լինի»:

Ազատամարտիկները միասնութեան կոչ են անում քաղաքական բոլոր ուժերին

Ղարաբաղեան պատերազմի մասնակից ազատամարտիկներն արդէն չորրորդ հանրահաւաքն են անցկացնում: Նրանք ակնկալում են քաղաքական բոլոր ուժերի համախմբումը՝ համատեղ ջանքերով Հայաստանում տիրող ամենաթողութեան մթնոլորտին, կոռուպցիային, անարդարութեանը վերջ տալու գործում:

Քաղաքական ուժերից միայն ընդդիմադիր «Ժառանգութիւն» է աջակցութիւն յայտնել նրանց: Հանրահաւաքին մասնակցում էր «Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը, ով նույնպէս իր ելույթում միասնութեան կոչ արեց գործընկեր քաղաքական ուժերին:

Մինչեւ հանրահաւաքը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցներում ազատամարտիկներ Սուրէն Սարգսեանն ու Խաչիկ Աւետիսեանն ասում էին, թէ դեռ որոշ ժամանակ էլ կը սպասեն, դեռեւս իշխանափոխութեան կոչեր չեն հնչեցնում, յոյս ունեն, որ իշխանութիւնները կ'անսասն իրենց կոչին ու կը սկսեն աշխատել այնպէս, որ Հայաստանը փրկեն կործանման վտանգից:

«Նրանք հիւանդ են, ու նրանց

բուժում է պէտք՝ մեծ կամ փոքր ասեղով, դա կախուած է բուժման իրենց ցանկութիւնից», - պատկերաւոր ասում է Սարգսեանը:

Սարգսեանը յաւելում է, որ իշխանութիւնները սկսել են խանգարել իրենց՝ ազատամարտիկների մէկ այլ խմբի իրենց դէմ են օգտագործում:

Իրենց սոցիալական պայմաններից դժգոհող ազատամարտիկները երեք ամիս առաջ հացադուլներ, նստացոյցներ եւ բողոքի այլ ակցիաներ սկսեցին: Սակայն վերջին շրջանում ազատամարտիկների շարքերում միասնութիւն չկայ. նրանց մի մասը կարծում է, որ իրենք պէտք է բաւարարուեն բացառապէս սոցիալական հարցեր բարձրացնելով: Ազատամարտիկների այս թեւը չի մասնակցելու Ազատութեան հրապարակում անցկացուող հանրահաւաքներին:

Ազատամարտիկների բողոքի ակցիաների արդիւնքում պաշտպանութեան նախարարութիւնում ստեղծուել է միջգերատեսչական յանձնաժողով, որը սկսել է քննարկել ղարաբաղեան պատերազմի վետերանների բարձրացրած հարցերը:

յայտնեց, որ քննարկել են նաեւ մեծ թիւով փաստաբանների՝ Կիվիրեանի պաշտպանութեան գործում ներգրաւուելու հարցը: «Բնական է, որ որոշակի դիմադրութիւն եղաւ, քննարկում ծաւալուեց՝ Քրէական կանոնադրութեան օրէնսգրքի ձեւակերպումների շուրջ: Տեխնիկապէս քանի որ դժուար բան է [քննիչը] դէմ է: Հիմա Ձեզ դրէք

քննիչի տեղը, ինչպիսի վիճակում կը լինէք Դուք, եթէ Ձեր կարիքները ընդամենը 12 քառակուսի մետր է, բայց ուզում են զալ այնքան մարդիկ, որոնք կարող են զբաղեցնել 300 քառակուսի մետր տարածութիւն, այսինքն բոլոր փաստաբանները Պալատին: Ձեմ կասկածում, որ բոլորը կը միանան այս գործընթացին,- ասել է Ռուբէն Սահակեանը:

ԼՈՒՐԵՐ

Amnesty International-ը Հայաստանին կոչ է անում յարգել անխտիր բոլորի իրաւունքները

«Առաջին հայեացքից՝ կարծիքների ազատ արտայայտման հետ որեւէ խնդիր Հայաստանում չկայ, քննադատական տեսակետներն ազատորէն հնչում են թերթերում, հեռուստատեսութեամբ եւ ինտերնետում, սակայն կան առանցքային թեմաներ, որոնք դուրս են մնում բանավէճերից կամ վերլուծութիւններից», - փաստել է իրաւապաշտպան, Հելսինկեան ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեանն ու ընդգծել, որ պետութեան կամ ազգային շահի մասին քննադատաբար արտայայտուելը Հայաստանում մինչ օրս շարունակում է մնալ տաբու, եւ անգամ այս խնդիրներով զբաղող իրաւապաշտպաններն ու հասարակական կազմակերպութիւններն են երբեմն խուսափում «ոչ հայրենասիրական կեցուածք որդեգրել»:

Amnesty International-ը եւս փաստում է, որ անկախութիւնից ի վեր Հայաստանում շատ բան է արուել քաղաքական ու քաղաքացիական ազատութիւններն ընդարձակելու համար, այդուամենայնիւ, պաշտօնական Երեւանը մինչ օրս լիովին չի իրագործել ստանձնած միջազգային պարտաւորութիւնները՝ տեսակէտների ազատ արտայայտումը երաշխաւորելու եւ խտրականութեան դէմ պայքարելու ուղղութեամբ:

«Ամէն օր մամուլում տարատեսակ սոցիալական ու քաղաքական մեկնաբանութիւններ են հրատարակուել, եւ կառավարութիւնն ու պաշտօնեաները հիմնականում հանդուրժում են իրենց ուղղութեամբ քննադատութիւնը, սակայն, տաբու են մնում դարաբարեան խնդիրը, բանակում գինուորների նկատմամբ իրականացուող ճնշումներն ու սպառնալիքները, տարածուած բնոյթ է կրում նաեւ խտրական վերաբերմունքն ու բռնութիւնները սեռական փոքրամասնութիւնների նկատմամբ: Եթէ նոյնիսկ պետութիւնը ուղղակիօրէն պատասխանատուութիւն չի կրում այս խտրականութեան կամ բռնութեան համար, միեւնոյնն է, շատ քիչ ջանք է ներդրում դրանց հակազդելու համար», - յայտարարում է միջազգային կազմակերպութիւնը, մանրամասնելով՝ պաշտօնեաները որպէս կանոն մեղադրում են «գայրացած ամբոխին» եւ թոթուում են ուսերը, մինչդեռ բռնութիւնների համար պատասխանատու անձինք յաճախ այդպէս էլ մնում են անպատիժ, տուժողները՝ անպաշտպան: Զեկուցում առանձին բաժնով իրաւապաշտպան կազմակերպութիւնն անդրադառնում



է օրինակ այն լրագրողներին ու իրաւապաշտպաններին, ովքեր ճնշումների կամ սպառնալիքների են ենթարկուել, երբ բարձրաձայն են բանակում կասկածելի հանգամանքներում արձանագրուած գոհերի կամ հրամանատարական կազմի կամայականութեան մասին:

«Կարծիք կայ, որ այս դէպքերում ճնշումները գալիս են բարձրաստիճան պաշտօնեաներից», - փաստում է միջազգային կազմակերպութիւնն ու մէջբերում ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի հարցազրոյցը «Զինուժին», որտեղ վերջինս պնդել էր, թէ «նրանք, ովքեր խօսում են բանակի խնդիրներից՝ հայրենիք, բարոյականութիւն ու արժանապատուութիւն չունեցող մարդիկ են»:

Փաստելով, որ այսօրինակ չաչտաչարութիւններն ու ճնշումները զսպող ազդեցութիւն են ունենում լրագրողների եւ իրաւապաշտպանների վրայ՝ հեղինակաւոր կազմակերպութիւնը կոչ է անում Հայաստանի իշխանութիւններին երաշխաւորել, որ վերջիններս կը կարողանան ազատորէն իրականացնել իրենց մասնագիտական գործունէութիւնը՝ առանց վախի, որ կ'ենթարկուեն հետապնդման կամ պատասխանատուութեան:

Պաշտօնական Երեւանին տրուած յանձնարարականների շարքում Amnesty International-ը նաեւ յորդորում է քայլեր ձեռնարկել, որպէսզի սեռական փոքրամասնութիւնների ներկայացուցիչները չենթարկուեն խտրական վերաբերմունքի՝ ոչ օրէսդրութեամբ, ոչ էլ իրական կեանքում:

Այս բաժնում եւս բերում են կոնկրետ օրինակներ, այդ թւում՝ DIY ակումբի վրայ անցած տարի կատարուած յարձակումը, որը իշխող կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմազանովը բնութագրել էր որպէս «հասկանալի եւ արդարացուած»:

Ադրբեջանի ԱԳՆ-ն վրդովուած է ուս լրագրողների՝ Ղարաբաղ կատարած այցով

Ադրբեջանի ԱԳՆ-ն վրդովուած է ուս լրագրողների՝ Լեռնային Ղարաբաղ կատարած այցի համար: Ադրբեջանի ԱԳՆ-ն արդէն «ապօրինի» է կոչել ուս լրագրողների՝ Լեռնային Ղարաբաղ կատարած այցը: Այս մասին գրում է 1news.az-ը: «Պաշտօնական Բաքուի դիրքորոշումը անփոփոխ է Ադրբեջանի օկուպացուած տարածքներ այցելելու կապակցութեամբ, եւ այն անձինք, որոնք նման այցեր են կատարում, մեր երկրում անցանկալի անձինք են համարուում», - յայտարարել է ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ էլման Աբդուլլաեւը:

Աւելի վաղ յայտնի է դարձել, որ Ղարաբաղ են ժամանել ուս լրագրողներ եւ հասարակական գործիչներ, որոնց թւում ուսական հետախուզութեան նախկին աշխատակից, ներկայումս հաղորդավարուհի Աննա Չապմանը: Այն իրականացուել է «Հայ-ուսական համագործակցութիւն» կազմակերպութեան նախաձեռնութեամբ: Ամենայն հաւանականութեամբ, ուս լրագրողները կը ներառուեն Ադրբեջանի ԱԳՆ «սեւ ցուցակում»:

Եգիպտոսում պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը

Իրաւաբան Ահմադ Իրակի Նասարը դատական հայց է ներկայացրել Եգիպտոսի վարչական դատարան՝ պահանջելով պաշտօնապէս ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը, որը իրականացուել է Օսմանեան կայսրութեան կառավարութեան կողմից 1915-ին:

«Ալ-Մասալահ» կազմի փոխանցմամբ, հայցում յիշատակուել է հայերի կեանքը՝ սկսած 11-րդ դարից, իրար յաջորդող իշխանութիւնների ստուերի ներքոց: Դրանցից վերջինն Օսմանեան կայսրութիւնն էր, որը ճանաչուել էր առանձին պետութիւն իր սեփական իրաւունքներով եւ 19-րդ դարում սկսեց վայելէջ ապրել՝ անուանուելով «Եւրոպայի ծեր մարդ»: Մի շարք ազգեր ստացան իրենց ինքնիշխանութիւնը:

Հայցում նաեւ ասում է, որ օսմանեան սուլթան Աբդ էլ-Համիդ Երկրորդը հայերի, յոյների եւ ասորիների իրաւունքների նկատմամբ առաջին ոտնձգութիւններն է կատարել՝ կազմակերպելով նշուած ազգերի կոտորածները տնտեսական եւ կրօնական բազում պատճառներով: Այս կոտորածները հայցում նշուել են «համիդական կոտորածներ» անունով:

Եգիպտոսի ընդդիմադիր ազգային ճակատը Թուրքիայի հետ յարաբերութիւնների սրացման ֆոնին կրկին բարձրացրել է Յեղասպանութեան ճանաչման հարցը: Ճակատի ներկայացուցիչ Մուհամմադ Սաադ Խէյր Ալլահը ճակատի անունից յայտարարել է. «Անհրաժեշտ է Եգիպտոսից վտարել Քաթարի եւ Թուրքիայի դեսպաններին»՝ աւելացնելով, որ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել է 24 պետութիւն, իսկ Եգիպտոսը հարցը քննարկելու է Սեպտեմբերի 4-ին:

Նա նաեւ աւելացրել է, որ «Եգիպտական կառավարութեան կողմից Հայոց ցեղասպանութեան ընդունումը հարուած կը հասցնի Թուրքիային»:

հասարակական բողոքի ալիքը

Շարունակուած էջ 1-էն

Միւս կողմէ, կը շարունակուի Երեւանի քաղաքապետարանի դիմաց Յուլիս 26-էն իվեր ընթացող նստացոյցը: Ծեծի ենթարկուած են հինգ անձիք: «Սա կոչուել է ահաբեկչութիւն, եւ ես սա այսպէս չեմ թողնելու», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է ծեծի ենթարկուած Գանատայի բնակիչ Միքայէլ Տօնյեանը: Ան պատմած է որ, ուշ երեկոյան քաղաքապետարանի առջեւ մօտ 20 վայրկեան խօսելէ ետք նստացոյցի մասնակիցներուն հետ, զացած է դէպի Յաղթանակի կա-

մուրջ: Կամուրջի մօտակայքը երեք-չորս երիտասարդներ փակած են ճանապարհը եւ հետաքրքրուած են, թէ արդեօք Տօնյեան կը մասնակցի նստացոյցին: Եւ թէ եւ ան պատասխանած է, որ նստացոյցին չի մասնակցիր, երիտասարդները, ըսելով թէ՛ «մեր պայաններուն ներառուած են», ետեւէն հարուածած են Տօնյեանին: Ան հարուածներէն ազդուած ինկած եւ վնասուածքներ ստացած է, իսկ յարձակող երիտասարդները դիմած են փախուստի: Երեւանի Ամիրեան եւ Մաշտոց փողոցներուն վրայ յարձակում տեղի ունեցած է եւս երկու ակտիւիստներու վրայ:

Ռուս դիւանագետը թե՛ աշուն կը նախատեսէ

Շարունակուած էջ 1-էն

Երկու կառույցները համատեղելի են, բայց կասկածներ կան հակառակի մասին»: «168 ժամ»-ը իր կողմէ կ'աւելցնէ, որ Ռուսաստան պիտի փորձէ Հայաստանին ճնշել ներսէն: «Որքան մօտենում է Վիլնիւսում Եւրամիութեան հետ Ասոցացման Համաձայնագրի նախատորարարման ժամկէտը՝ Նոյեմբերը, այնքան աւելի ակտիւանում են ուսական իշխանութիւնների փորձերը՝ Հայաստանին եւրախտեգրումից ետ պահելու ուղղութեամբ: Հայաստանի վրայ ճնշման հիմնական գէնքն, անշուշտ, Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցներն

են: Սակայն մինչ այդ ուսական կողմը փորձելու է Հայաստանին ճնշել ներսից: Մեր տեղեկութիւններով, Օգոստոսի 30-ին Հայաստանում Ռուսաստանի դեսպանի մօտ են հրաւիրուել Հայաստանում ուսական կապիտալով աշխատող բոլոր ձեռնարկութիւնների ղեկավարները, որոնց յատուկ յանձնարարութիւն է տրուելու խոչընդոտել Հայաստանի եւրոպական ընտրութեանը: Իսկ «Եւրասիական Ինտեգրացիա» ժողովրդական նախաձեռնութիւնը պէտք է ոտքի հանի հայ հասարակութեանը՝ ցոյց տալու համար, որ հայ հանրութեան ճնշող մեծամասնութիւնը կողմ է եւրասիական ինտեգրմանը...», - կը գրէ «168 ժամ»-ը:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
 (626) 398-0506

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆ:

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՅՔԻ ԱՍԵՆԱՇԱՏ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՐՆ ԵՆ»

Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյեանը Tert.am-ի հետ զրույցում անդրադառնում է Հայոց ցեղասպանության 100-ամեակին ընդառաջ իր դեկավարած կառույց կողմից կատարուող աշխատանքին: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության ճանաչման գործին՝ Հայկ Դեմոյեանը նշում է, որ պետք է անընդհատ նոր եղանակներ գտնել, որպեսզի ճնշումը, յատկապես հոգեբանական դաշտում, աւելի մեծացուի, քանի որ ամէն մի ճանաչում, նրանց այլևս բերում է ակնյայտ ցնցումների:



- Պարոն Դեմոյեան, տեղեկութիւններ կան, որ Թուրքիան եւս շատ ակտիւ նախապատրաստում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, ինչպէս եւ մենք, ոչ պակաս: Ինչ-որ ֆիլմեր եւս նկարահանում:

- Թուրքերը առաջին տարին չէ, որ նախապատրաստում են, նրանք պատրաստում են ամէն Ապրիլից առաջ, բայց քաջ գիտակցելով, որ 2015-ին լինելու է աւելի մեծ ճնշում, լինելու են բազմաթիւ ձեռնարկներ եւ նախաձեռնութիւններ, նրանք այսպէս ասած՝ կանխարգելիչ միջոցառումներ են ձեռնարկել: Ո՞րն է այդ կանխարգելիչ միջոցառումների իմաստը. աւելի մեծ ֆինանսներ են տրուում տարբեր ձեռնարկների, այդ թւում՝ Ձեր յիշատակած ֆիլմերի, որոնք գեղարուեստական են, բայց իրենց գեղարուեստականութեան մէջ նաեւ քարոզչական իմաստ ունեն: Խօսու են օրինակ է «Սարիղամիշ» ֆիլմը: Կան մի քանի այլ ֆիլմեր եւս: Ասեմ նաեւ, որ մեզ առաջարկ է եղել, թարգմանուած սցենար են ներկայացրել, որ նիւթեր տրամադրենք ֆիլմ նկարահանելու համար: Նպատակը մէկն էր՝ նիւթեր հաւաքել մեզնից, շօշափել՝ ինչ ունենք, բայց դա մատուցուեց իբր կոտորածների մասին ֆիլմ:

- Եւ ի՞նչ էր ասում սցենարը, թուրքերի ի՞նչ ճշմարտութիւն:

- Շատ հակիրճ եմ ասում. թուրքերը որբի պատմութիւնն էր, որը վերջում հայ է դառնում եւ սպանում է ֆաշիստների կողմից եւ որը, ի վերջոյ, շատ մեծ սիմպատիա պէտք է առաջացնէր այդ նոյն թուրքերը որբի նկատմամբ, որը ճանապարհին տեսել էր կոտորածի ենթարկուած հայերի, եւ այս սիւսէին ներկայացուած էր յընթացս, իմիջիմիջ: Լաւ արուած էր եւ նոյնիսկ չէին զլացել թարգմանելու: Մենք ուղղակի չպատասխանեցինք, քանի որ ծանօթացանք, հասկացանք, որ թուրքական կողմի այս սցենարը, մեղմ ասած, ծուղակ է, եւ այդ սցենարի անուան տակ նրանք ցանկանում էին ստանալ թանգարանի ողջ պարունակութիւնը՝ ֆիլմեր, լուսանկարներ, փաստաթղթեր: Ասեմ, որ առաջին տարին չէ, որ գործ ունենք թրքական քարոզչութեան հնարքների հետ, ուստի այս տարբերակով մեզնից ինչ-որ բան կորցել է ի ստացուի: Ինչ վերաբերում է հետագայ անելիքներին, ապա թուրքերն այս պահին աւելի շատ շեշտը դնում են 2015-ին նախատեսուած խոշոր քարոզչական ձեռնարկների, այդ թւում՝ տարբեր երկրներին առաջին դէմքերի կամ բարձրաստիճան պաշտօնեաների մասնակցութեամբ այսպէս կոչուած՝ Դարդանելի հերոսա-

մարտի քարոզչական բեմականացման արարողութեանը մասնակցութիւն ապահովելու վրայ: Դա արւում է ամէն տարի, եւ սակայն 2015թ պէտք է սպասել, որ այն առանձնապատուկ շուքով կ'անցկացուի, որին կը փորձեն մասնակից դարձնել խոշոր տերութիւնների դեկավարները:

Կարծում եմ՝ շքեղ մի շուք կը լինի, որին, ցաւօք սրտի, կարող ենք ասել, որ արդէն իրենց համաձայնութիւնը տուել են մի քանի երկրների բարձրաստիճան պաշտօնեաներ: Սա, թերեւս, խօսում է մի բանի մասին, որ թուրքիան ունի կշիռ համաշխարհային քաղաքականութեան մէջ եւ դա փորձում է օգտագործել: Դա յաջողում է զուտ այն պատճառով, որ նոյն այդ երկրների բարձրաստիճան պաշտօնեաները հեշտօրէն տրուում են թուրքական ճնշումներին: Եւ թուրքերը աշխատանքները սկսուել են մի քանի տարի առաջ, որպէսզի հարիւրամեայ տարելիցին հաջկահան կողմից ակնկալուող հուժկու ալիքը կարողանան կասեցնել: Կարծում եմ՝ հրապարակ կը հանուեն նաեւ կեղծ գիտական աշխատութիւններ՝ վարձու հեղինակների կողմից պատրաստուած: Բայց այստեղ մի հետաքրքիր նրբութիւն կայ: Բանն այն է, որ թուրքական քարոզչութիւնը մի փոքր փոխել է իր ուղղակարութիւնը: Եթէ նախկինում դա արտայայտուած էր որպէս կտրականապէս ժխտում եւ հայերի նկատմամբ մեղադրանք, ապա այժմ՝ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ընթացող գործընթացի եւ առկայ գիտահետազոտական աշխատանքների ծաւալի ճնշման տակ թուրքիան այլևս հասկացել է, որ այդ քարոզչութիւնն ուղղակի յաջողութիւն չուներ: Այսինքն՝ լիակատար ժխտման քաղաքականութիւնը պարտութիւն է բերում: Այդ գիտակցումն է, որ նրանց հանգիստ չի թողնում եւ բերում է նոր շղաճգումների եւ փորձում են իրենց յայտնի դիւանագիտական միջոցներով նոր մարտավարութիւն որդեգրել: Եւ այժմ փորձում են շեշտը դնել տարբեր երկրների հետ թուրքիայի երկկողմանի առեւտրային ու տնտեսական յարաբերութիւններում ցուցանիշների բարձրացմանը: Ասում են, որ ապագայում փոխադարձ ներմուծումն ու արտահանումն աւելացնենք, քան խօսենք պատմութեան դէպքերի մասին: Ուշադրութիւն դարձրէ՛ք, որ չեն ասում՝ «չի եղել», այլ շեշտում են այսպէս ասած՝ «առաջնայինը» եւ «ոչ կարեւորը» թեմաներով:

Եւ այս ամէնն ամփոփելով, կարող եմ նշել, որ թուրքիան, գոնէ վերնախաւային մակարդակով, լի-

միտաները, թէ ազգայնականները, դեռեւս պատրաստ չեն եւ մօտակայ մի քանի տասնամեակներում էլ պատրաստ չեն լինի առերեսուելու սեփական պատմութեանը եւ թրքական պետութեան կողմից իրականացուած յանցագործութեանը: Սա մեզ պէտք է վհատեցնի կամ հիասթափութեան դատապարտի: Մենք պէտք է անընդհատ նոր եղանակներ կարողանանք գտնել, որպէսզի ճնշումը, յատկապէս հոգեբանական դաշտում, աւելի մեծացնենք, որտեղ այլևս թրքական դիրքերը խիստ խոցելի են, քանի որ ամէն մի ճանաչում, նրանց այլևս բերում է ակնյայտ ցնցումների: Եւ եթէ թուրքական կողմն այն մատուցում է որպէս թուրքիայի եւ թուրք ժողովրդի պատուի հարց, մենք պէտք է գիտակցենք, որ սա այլևս թրքական պետութեան եւ այդ ժողովրդի անվտանգութեան հարցերից մէկն է դառնում. Հայոց ցեղասպանութեան հարցը վերածուել է մի կատալիզատորի, որն էլ աւելի է արագացնում թուրքիայի ներսում պետութեան եւ հասարակութեան բեւեռացման գործընթացները: Սա չի արւում միտումնաւոր, ուղղակի թեման ինքնին յայտնուելով այդ փորձում միջավայրում, ինչպիսին թրքական պետականութիւնն ու ազգային ինքնութիւնն է, որը արհեստականօրէն է ձեւակերպուել վաղ քեմալական շրջանում, Հայոց ցեղասպանութեան թեման լրացուցիչ քայլքայիչ գործօնի դեր է կատարում:

-Իսկ տեղեանք էք թուրքերը հանդէս են գալու գիտական ձեռնարկներով:

- Այս պահին տուեալներ չունենք, սակայն ակնյայտ է թուրքական կողմի հետեւողական աշխատանքը Հայոց ցեղասպանութեան նոր սերնդի ուսումնասիրողներ պատրաստելու գործում: Մենք հետեւում ենք այն ցուցանիշներին, թէ նրանք ինչպէս են ուշի-ուշով հետեւում մեր կայքին. Իւրաքանչիւր օր ունենք 300-400 այցելու, ստանդարտ՝ անկախ նրանից՝ կը լինի՞ կայքում թարմացում, թէ ոչ: Եւ ասեմ, որ ամենաշատ այցելուները հենց թուրքերն են: Ինչի՞ մասին է սա խօսում. Պատրաստի ղեկավարների եւ ներգործող միջոցների առկայութեան կարեւորութեան մասին: Եւ յաջորդ հարցը՝ ո՞րն է Հայաստանում կամ սփիւռքում այն ղեկավարը, որը կարող է ներգրգել, թուրք հասարակութեան վրայ, որպէսզի նրանք հետաքրքրուեն: Նոր նիւթերի յայտնաբերումն ու դրա հրատարակմանը, Հայոց ցեղասպանութեան հարցը պէտք է փաթեթաւորուի եւ մատուցուի որպէս թուրք ժողովրդի եւ թուրքիայի պատմութեան բաղադրիչ: Ցաւօք սրտի, շատ ուշ ենք յանգում այս պարզ գիտակցմանը: Մատուցման ձեւերն ու միջոցները խիստ կարեւոր են, որովհետեւ եթէ մենք հակադարձում ենք եւ փորձում ենք ուժի դիրքից հանդէս գալ, հակահարուած ենք ստանում: Այնպէս որ, պէտք է փնտուել ասիմետրիկ հակազդեցութեան ու ներգործութեան այլ եղանակներ՝ թրքական հասարակութեան ներսը ներթափանցելու համար: Սա, անկասկած, կը հանգեցնի ցանկալի արդիւնքի, որը միմիայն հետեւողական աշխատանքի արդիւնքում է լինում: Պարզ յայտարարութիւնների, ճառերի ար-

դիւնքում ոչինչ չի լինում: Ես նորից եմ հարցնում՝ կա՞յ նոր քարոզչական ղեկավար: Ես լեզուների քանակը չեմ ասում, որովհետեւ հինգ լեզուով կայք պահելը մարդկային սուղ ղեկավարների պայմաններում անուշիկ ու ժամանակատար գործ է: Բայց մենք հասել ենք այդ հանգրուանին եւ այսօր ունեն այդ գործիքը, որի վրայ ուշի ուշով կենտրոնացուած են թուրքերը եւ ոչ միայն նրանք: Բացի նուիրատուութիւնների, դրամական աջակցութիւնների մասին անընդհատ թմբկահարելուց, պէտք է մտածել նաեւ արդիւնաւէտ գործիքներ ստեղծելու մասին, որոնք, ցաւօք սրտի, այսօր չկան:

- Եւ ի՞նչ էք այդ առումով ակնկալում:

- Ես ակնկալում եմ ուժերի համագործում՝ թէ՛ ներհայաստանեան, թէ՛ Հայաստան-սփիւռք հարթութիւնում եւ թէ՛ սփիւռքի ներսում: Այժմ մենք դեռ կարող ենք խօսել համեստ ցանկութիւնների մասին: Ներուժ կայ, ուղղակի չկայ այդ կամքը, որը պէտք է ստեղծի այդ միջոցները, գործիքները: Այլ խօսքով ասած՝ կայ յստակ ռազմավարութեան տեսլական, բայց ոչ ոք չի ուզում կենտրոնանալ դրա վրայ: Սա կարեւոր եւ կենսական մի խնդիր է, որի լուծմանը ներգրաւուած պէտք է լինի Հայոց ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը:

- Վերադառնանք թուրքական քարոզչութեանը: Ասացի՞ր ուզում էին նիւթեր ստանալ այդ սցենարի պատրուակով: Իսկ լրտեսութեամբ՝ գիտական կամ այլ զբաղում են: Եւ ինչպէ՞ս էք կարողանում դրա դէմն առնել:

- Նման դէպքերը լինում են ամէն շաբաթ: Մենք արդէն բնագրաբար ենք գզում՝ նամակ գրողի հետեւում իրական ցանկութիւն է, քան այն, ինչ պէտք է թուրքական հետախուզութեանը: Օրինակ՝ մինչեւ վերջերս մենք ստանում էինք խայծի տեսքով նիւթեր կամ փորձում էին տեղեկանալ մեր ծրագրերի մասին, օրինակ՝ գեղարուեստական ֆիլմեր նկարահանելու առումով: Հասկանալի է, որ թուրքական կողմին շատ է անհանգստացնում ֆիլմ նկարահանելու գաղափարը եւ փորձում են ստանալ տեղեկութիւն: Ինչպէ՞ս ենք մենք դա հասկանում. եթէ մեզ ոմն Ջոն Սմիթ յայտնի մի նամակ է գրում, ու դրանից յետոյ չի լինում միջնորդաւորում, ապա ամէն ինչ հասկանալի է: Մարդիկ էլ կան, որ պարբերաբար գալիս են թանգարանում կատարուող փոփոխութիւններն արձանագրելու համար: Ես չեմ ուզում բարձրաձայնել, թէ ինչ աշխատանք է տարւում, բայց եղել են նաեւ միջադէպեր: Ես անձամբ դուրս եմ հրաւիրել թուրք ֆոտոլրագրողին, որը նկարում էր թուրքիայի քաղաքացիների կողմից արուած գրառումները այցելուների տպաւորութիւնների մատեանում: Այդ գրառումներում մարդիկ ցաւ էին յայտնում, ներողութիւն էին խնդրում: Անընդհատ ինձ հարցնում են թուրքերի այցելութիւնների քանակի մասին: Այսինքն՝ կայ մի յստակ հարցաշար, որն իրենց հետաքրքրում է: Թուրքերին շատ է տխրեցնում թանգարա-

ԻՆՉՆ Է ՎԱՏ ԵՒ ԻՆՉՐԸ՝ ԼԱՒ ՄԵՁ ՀԱՄԱՐ ՓՈՒԹԻՆԻ ՊԱՔՈՒ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՈՒՄ

ԱՐՄՄԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ Արտակարգ եւ լիազոր դեսպան

Անգլիացի մեծանուն վրայասան Դանիէլ Դեֆոյի հանրայայտ Ռոբինզոն Կոուզոն մի օր որոշեց գրի առնել, թէ անմարդաբնակ կղզում իր համար ինչն է լաւ, եւ ինչը՝ վատ: Եթէ այդ լեզունդար հերոսը հրաշքով յայտնուէր մեր մէջ եւ հանդէս գար որպէս քաղաքական վերլուծաբան, հաւանաբար, կը յուշէր հետեւեալ կերպ շարադրել այս յօդուածը:

Հայաստանի համար վատ է, որ...

1. Մեր N1 ռազմաքաղաքական գործընկեր-լիդերը երկրորդ անգամ նախագահ ընտրուելուց յետոյ այցելում է ոչ թէ մեզ, այլ Ատրպէյճան, որի հետ մենք փաստորէն պատերազմի մէջ ենք: Ընդ որում, Մոսկուան առաջ է քաշում ստիւստական կասկածելի արտայայտութիւն, թէ «ամբարշտում է ոչ թէ իր բարեկամի թշնամուն, այլ իր գործընկերոջը»: Յետոյ փորձում է մեզ համոզել, թէ այցն ընդամենը սովորական օրացուցային միջոցառում է երկու երկրների միջեւ: Մինչդեռ ոգնիններն անգամ գիտեն, որ միջպետական յարաբերութիւններում ոչինչ հենց այնպէս չի արւում՝ անգամ արարողակարգի մակարդակով: Պարզապէս Հայաստանի վրայ, նրա արեւմտեան նկրտումների կապակցութեամբ, Մոսկուայի վերջերս գործադրած քաղաքական, տնտեսական եւ հոգեբանական ճնշումներին աւելացաւ եւս մէկը՝ Փուլթինի այցելութիւնը Պաքու:

2. Փուլթինի Պաքուում գտնուելու ժամանակ պարզուեց, որ երկու երկրների ռազմական համագործակցութեան ծաւալը ոչ թէ 1, այլ 4 միլիարդ տոլար է: Զանգուածային ոչնչացման հաւասարագործ «Սմերչը» դնել քո բարեկամի թշնամու տրամադրութեան տակ եւ պատճառաբանել, թէ դա բիզնես է կամ հանգստացնել նրան, թէ այդ զէնքն իր դէմ չի գործելու, մեղմ ասած քաղաքական բլեֆ է, ցինիկ ալոզիզմ: Ով-ով, բայց մեր ռուս բարեկամները պէտք է լաւ յիշեն Չեխովի այն մարգարէական խօսքերը, որ պատից կախուած հրացանը վերջիվերջոյ կրակելու է:

3. Հարաւային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ աշխարհաքաղաքական շահերն ապահովելու համար ռուսական դիւանագիտութիւնը խաղում է հայ-

ատրպէյճանական հակամարտութեան վրայ եւ օգտագործում է «Բաժանիր, որ տիրես» («Divide et impera») հնամենի, բայց միշտ գործուն քաղաքական գէնքը:

4. Պաշտօնական Մոսկուան, յայտարարելով, թէ Ատրպէյճանը տնտեսական ու էներգետիկ առումով Կովկասի եւ Կասպեան աւազանի խիստ կարեւոր ու հզոր պետութիւն է, ստորագրում է նրա հետ տարբեր բնագաւառներում համագործակցութեան վեց կարեւոր պայմանագրեր: Մեծ հաշուով, մեր շահերից չի բխում, որ իր իսկ ջանքերով տապալուած «Նաբուկո» ծրագրի փոխարէն Մոսկուան Պաքուի հետ համաձայնութիւն է ձեռք բերում Ատրպէյճանի, Վրաստանի, Թուրքիայի, Յունաստանի եւ Իտալիայի տարածքով «Տրանսպորտային» գազատար կառուցելու վերաբերեալ, որին Հայաստանը չի մասնակցելու, ինչպէս որ դուրս է մնացել տարածաշրջանային այլ ծրագրերից: Եթէ դրան աւելացնելու լինենք Ատրպէյճանից Վրաստանի տարածքով դէպի Ռուսաստան եւ Եւրոպա ձգուող Պաքու-Թբիլիսի-Ջեյհան, Պաքու-Թբիլիսի-Էրզրում հաղորդակցողիները (կոմունիկացիաները), որոնք նոյնպէս շրջանցում են Հայաստանը, ապա կարելի է մօտորապէս պատկերացնել Ատրպէյճանի եւ Ռուսաստանի համագործակցութեան մասշտաբների հեռանկարները եւ մեր կորուստները: Ի դէպ, ժամանակին մենք հպարտանում էինք դրանց միացած չլինելու հանգամանքով, ինչպէս նաեւ կանխատեսում էինք Ատրպէյճանի ածխաշրտածնի պաշարների մօտալուտ սպառումն ու նրա անանկացումը:

5. Ռուսաստանն Ատրպէյճանին դիտում է որպէս կամուրջ, կապող օղակ իր եւ Մերձաւոր Արեւելքի միջեւ: Այս ենթատեքստում ծրագրում է կառուցել տրանսպորտային միջանցքներ, որոնք Ռուսաստանից կը հասնեն Ատրպէյճան ու իրան՝ մինչեւ Պարսից ծոցի երկրներ: Մոսկուան պլանաւորում է սկիզբ դնել Ռուսաստան-Ատրպէյճան-Իրան եռակողմ համագործակցութեան: Մասնաւորապէս, խօսքը վերաբերում է նորընտիր նախագահ Հասան Ռոհանիի կազմային փոփոխութիւններում Իրանի 25-միլիոնանոց ատրպէյճանական համայնքի մասնակցութեանը: Այս եռանկիւնու շրջանակներում Պաքուն, բնականաբար, աշխատելու է Հայաստանի դէմ: Ընդհանրապէս



վատ է, որ Կովկասից սկիզբ առնող Ռուսաստանի՝ Մերձաւոր Արեւելք եւ Իրան քաղաքական վեկտորին մասնակցել կարող է Ատրպէյճանը, իսկ Հայաստանը՝ ոչ: Մինչդեռ այդ յարաբերութիւններում նա կարող էր լինել առաջին ջուլթակ՝ հաշուի առնելով տարածաշրջանային եւ դրանից դուրս գտնուող մի շարք օբիեկտիւ գործոնները:

6. Փուլթինի այցելութիւնը Պաքու տեղի ունեցաւ միջազգային յարաբերութիւնների եւ տարածաշրջանային ներկա լարուած իրավիճակում: Օգտուելով այս հանգամանքից եւ հայ-ատրպէյճանական ինֆորմացիոն առձակատումից՝ Պաքուն փորձելու է այցն օգտագործել մեր դէմ երկու ուղղութեամբ՝

ա/ բորբոքել հակառուսական տրամադրութիւնները Հայաստանում, որոնք օբիեկտիւ եւ սուբիեկտիւ պատճառներով նկատելիօրէն սրուել են այստեղ,

բ/ ստանալու են խուճապ սերմանել հանրապետութիւնում՝ յատկապէս շահարկելով ռուս-ատրպէյճանական ռազմական համագործակցութեան հանգամանքը:

7. Հայաստանի արտաքին քաղաքականութեան դիվերսիֆիկացիայի դէպքում, Ռուսաստանը նրա նկատմամբ կը կիրառի «մկանային քաղաքականութիւն», որի հաւանականութիւնը մեծ է: Նման ճնշումը կարող է բերել հանրապետութիւնում տնտեսական, սոցիալ-քաղաքական դրութեան կտրուկ վատթարացման եւ զանգուածային յուզումների՝ ոչ առանց դրսի ուժերի օգնութեան: Հաշուի առնելով հանրապետութիւնում ներքաղաքական ներկա իրավիճակը՝ չի կարելի բացառել, որ դէպքերի այդպիսի զարգացումը կարող է վերացնել ներկայ վարչակարգը:

Հայաստանի համար լաւ է, որ...

1. Փուլթինի Ատրպէյճան այցելութեան ընթացքում Լեւոնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգաւորման, ինչպէս նաեւ ԼՂՀ-ի ներ-

կայ ստատուս քուոյի շուրջ որեւէ նոր ու անսպասելի յայտարարութիւն չարուեց: Իսկ Հայաստանի որոշ քաղաքական շրջանակների անհուն բերկրանքը ռուս նախագահի արտասանած խօսքերի առթիւ, կարելի է դասել քաղաքական ինֆանտիլիզմի շարքը: Եթէ միջազգային յարաբերութիւնների նոր պատմութեան շրջանում նման հարցի կապակցութեամբ որեւէ պետութեան լիդեր արտայայտուած լինէր այլ կերպ, կարելի կը լինէր փուլթինի մտքերը ոսկէ տաւերով գրել մեր գիտնաշանի կողքին եւ այդ օրը յայտարարել պետական տօն:

2. Չնայած ռուս-ատրպէյճանական յարաբերութիւնների որոշակի առաջընթացին, Մոսկուան հազիւ թէ փոխի իր տարածաշրջանային ռազմավարական գործընկերոջը նոր դաշնակցով: Այդպէս մտածելը կը լինէր քաղաքական խաբկանք: Եւ ոչ թէ այն պատճառով, որ Մոսկուան չէր ուզի աւելի խորացնել իր կապերը Պաքիճի հետ, այլ այն բանի համար, որ վերջինս չի կարող եւ չի ցանկանայ կտրուել Արեւմուտքից մի թուրք-իայից ռուսական հովանոցի տակ մտնելու համար: Այնպէս որ, Ռուսաստանը մտադրուած չէ շուռ գալ Հայաստանից՝ յանուն Ատրպէյճանի: Յիշենք մէկընդմիշտ՝ Հայաստանը նոյնքան կարեւոր է Ռուսաստանի համար, որքան Ռուսաստանը Հայաստանի համար:

3. Փուլթինի այցելութիւնն Ատրպէյճան, որը մերոնք, չգիտես ինչու, համարում են ձախողուած, վերջնականապէս կը համոզի Հայաստանի ղեկավարութեանը, որ Վիլնյուսում անհրաժեշտ է նախատորադրել Ասոցացման պայմանագիրը եւ ակտիւօրէն համագործակցել Եւրոպայի, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգների հետ: Այդ քայլը կ'օգնի մեզ դուրս գալու ռուս-հայկական յարաբերութիւն-

Շարք էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՀԱԼԵՊԻ ԱՌՕՐԵԱՅԵՆ

ՊԵՐՃՈՒՂԻ ԱԻԵՏԵԱՆ

Զգոյշ ... այնպէս պիտի շար-
ժիս, որ կողքինդ չարթննայ...

Տան մէջ սա միակ սենեակն է
«ապահով» համարուած, որ ներ-
կայիս մեր ապաստարանն է:

Իսկ ապահով տեղ մնա՞ց այս
քաղաքին մէջ, մանաւանդ, երբ
«հառւըն» կոչուած թուշող պատու-
հասները սուլելով կ'անցնին՝ սիրտդ
պահ մը կանգ կ'առնէ... Զօրաւոր
պայթումի ձայն:

- Փառք Աստուծոյ, ուրիշ տեղ
ինկաւ:

Ուրիշի ողբերգութիւնը ան-
կասկած գոհունակութիւն է չի պատ-
ճառեր, բայց գլխու վրայ սպառ-
նացող վտանգի մը հեռանալը, այլ
տեղ ինչպիսի բաւարարու-
թիւն կը շնորհէ, որ կ'ամչնաս
անձնասէր դառնալու սեմին հաս-
նելուն: Անհանդարտ գիշեր էր...
զարկեր, պայթող ուռմբերու, ար-
կերու խլացնող աղմուկ, իսկ ամե-
նացնողը «Աստուած մեծ է» կան-
չերը:

- Կը լսե՞ս, միւսներն ե՞ն,-
միտեց քոյրս:

Մուտի մէջ ականջս կ'ուղ-
ղեմ դէպի պատուհան: «Աստուած
մեծ», « օրհնեալ խօսքն ալ
սարսափազդու դարձաւ:

- Լսե ցի՞ր,- քոյրս անդրդ-
ուելի է:

- Այո՛, կը լսեմ, հեռու են:

- Ձայն-մայն չկայ, քնացէք,-
մայրս հանդարտեցնողի իր դերին
մէջ է միշտ:

Եթէ «միւսներ»-ն են... անհ-
րաժեշտ քանի մը հագուստ ճամպ-
րուկին մէջ, լայլթափը ու ձեռքի
պայուսակը պատրաստ են... մինչ
տունը ձգել ու փախչիլը մտաբերե-
լը պահ մը կը փշաքաղէ:

Պետական գօրքը թաղի մուտ-
քին կանգնած տէրութիւն կ'ընէ,
իսկ «միւս»-ները քիչ մը անդին
են, երկար թաղ մը որպէս չէզոք
գօտի վեց ամիսէ երկու կողմերուն
միջեւ կը մնայ անփոփոխ: Բա-
խուսները անխուսափելի են, իսկ
ներխուսման ասը՝ միշտ ալ ներկայ
ու փշաքաղող:

Կիզիչ ամառուան յաջորդեց
ցուրտ ձմեռը: Զօրակոչիկներու
խումբերը պարբերաբար փոխուե-
ցան, «միւս»-ները (հագար փառք)
մնացին իրենց շրջանին մէջ, չէզոք
գօտին մնաց անփոփոխ ու անիծեալ
զէնքերը, ռումբերը, «տոշքա»-նե-
րը, «արպէճէ»-ները ոչ միայն
գօրակոչիկները, այլ երկրի փոք-
րիկները վերածեցին մարտական-
ներու... ԱՓՍՍՍ:

Չորս օր էլեկտրականութիւն
չկար, փոքրիկ լուսարձակի ներկա-
յութիւնը կը ստուգեմ բարձիս տակ
ու նեղ միջոցին մէջ վերմակս
կ'ուղղեմ... Սաստիկ ցուրտ է, ոտ-
քերս չեն տաքնար, կլիման ալ կը
սպառնայ բոլորիս, դիմացէք, եթէ
կրնաք: Ինչ կայ որ, կը դիմանանք,
կը դիմանանք...

Վառօթի, խանձած տախտակի
ու ծուխի խառն հոտին հակազդող՝
տարածուած է ձիւնը մաքուր, սպի-
տակ սաւանի նման:

Յուրտը մոռցած՝ կլանուած
կը դիտեմ եկեղեցւոյ շրջակայքի
ձեփ-ձերմակ տանիքները ու կը
մըմնջեմ «Հայր Մեր»-ը... Փառք
Աստուծոյ, եկեղեցին անասան է,
փառք Աստուծոյ, այսօր ալ մեր
տան երդիքին տակ կը դիմաւոր-
ենք «նոր օրը», սա մասմաքուր,
սպիտակ օրը: Սեփական տան մէջ

կարենալ մնալ ու ապրելու պարզ
ու սովորական երեւոյթը ներկայիս
շնորհ ըլլալ կը թուի:

- Տակաւին ձեր տո՞ւնն էք,-
քանի հարիւրերորդ անգամ ականջ-
ներս թմբեկահարող այս հարցումը
եւ անոր յաջորդող խրատներու եւ
թեւադրանքներու շարքը սկսած են
լարել ջիղերս:

- Հա՛, տունն ենք,- կը պա-
տասխանեմ ու մտովի կը շարունա-
կեմ: - Թուշող արկերը, տեղատա-
րափ գարկերը, թնդանօթի ձայնե-
րը, ցնցումները մենք կը վայելենք,
խելք ալ ունինք հասկնալու, որ
Նաւը աւելի էր մօտենում ավիին, անշուշտ չէինք իմանում Վանկամ տեսնել գիւմ Կիլիկիա՝ երգը, սա- կայն ահա նրա լեռների գեղատեսիլ համայնապատկերն էր փռուած մեր առաջ: Յովսէփը, նաւի ցուկի տախտակամածին կանգնած թե- ւերն էր հրճուագին թափահարում, բոկեղներ նետում ծովի սպիտակ փրփուրների մէջ խաչտաչող դալ- փիւններին: Պիթիասցի Պարգե Ֆիլ- եանն էր յանդիմանում նրան, թէ ինչու իր բոկեղները ծովն էր նետում: Յովսէփը գմայլած դալ- փիւնների հրաշխադի արթնած զգայացունց հրայրքով, շշնջում էր թէ լաւ էլի, դպրոց հասնելուց այն կը վերադարձնէր: Սակայն, նա այդպէս էլ երբեք այն չվերադարձ- րեց, դպրոցում բոկեղ որտեղից:

Նաւը Մէրսին նաւահանգս- տում խարսխ էր գցել: Աշխուժու- թիւն էր նաւի վրայ, բեռներ էին բեռնաթափում, նոր բեռներ ըն- դունում: Պիտակի բեռնաթափ- ման ատեն մի պարկ էր պատուել, պիտակը թափուել տախտակամա- ծին: Յովսէփը, յանդուգն մօտեցել էր թափուած պիտակին, այն հա- ւաքել վերնաշապիկի ծալքին ու եկել բաժանում մեզ: Մեր հարցին, թէ այդ ո՞րտեղից, պատասխանել էր՝ ձեռ ինչ գործն է, կերէ՛ք: Հում պիտակ էր, կերանք, սակայն քթնե- րիցս ելաւ . . . : Մէրսին, փոքրիկ նաւահանգիստ՝ յենած կանաչ դա- րաւանդներին: Հրաշագեղ, կորուս- եալ չքնաղ Կիլիկիա աշխարհին շատ մօտիկ էինք: Պատմիչները աւանդում են, որ Մամլիւքները նրա իշխանութիւնը խորտակեցին, կանխելու համար արեւմուտքի թա- փանցումը դէպի արեւելք: Հայրը ինչքա՞ն Մուսայեցիին արեւմուտ- քի քաղաքակրթութեան արժէքնե- րը դաւանելու համար . . . :

Նաւը բաց ծով էր դուրս եկել, արեգակը հեռանում էր մեզանից, գնում ուրիշ երկրներին էլ լոյս ճամբելու, իր տաքուկ վարսերով շոյելու բազում շէնքեր եւս: Մօտե- նում էինք ցամաքին, Կիպրոսն էր, Փամակուտա նաւահանգիստը: Մեզ դիմաւորող պաշտօնեան երկիր մուտքի ձեւակերպումները կատա- րելուց յետոյ, դէպի Նիկոսիա, Մել- գոնեան, Կարապետ ու Գրիգոր անմահ եղբայրների ուսման լոյսի տաճար: Տղաների շէնքի ննջարա- նում էինք, ընդարձակ սրահ, ուղիղ շարքերով հարկաւոր մահա- կալներ, որտեղ ննջում էին բարե- հոգի եղբայրների սաները: Նրանք վճռել էին վրէժ լուծել դուշմանից՝ գոհուած քերթողների փոխարէն Հայ մշակոյթի նոր առաքելներով օժտելու ավիւրքը:

Մելգոնեանում մեր առաջին լուսաբացը, ձեւասարհում սաները շարք էին կազմել ըստ դասարան- ների, երգով փառաբանում առա- ւօտեան արեգակի լոյսը: Նորեկ սաների շարքից Յովսէփն էր բարձր ձայնակցում.

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ ի լոյս ծագեալ
Նոր սաներին առաջնորդեցին
ուսուցչանոց: Նորէն Յովսէփն էր աշխոյժ, համարձակ պատասխան- ներով կրթական տեսուչի ուշադ- րութիւնը գրաւում: Ըստ տարիքի ու երեւի նաեւ գիտելիքների մա- կարդակի մեզ նշանակեցին տար- բեր դասարաններ, Յովսէփը ինձա- նից մի դասարան բարձր էր: Ուսման ժրջան տարիներ էին, Յովսէփը իր դասարանի առաջա-



Երուանդ Պապայեանի մեծարմամ օրը Հոկտեմբեր 4, 1998 թիւ աջէն ձախ Յովսէփ Ասատրեան, Երուանդ Պապայեան, Գաբրիէլ Մալլաեան, Հաճի Յակոբ Սիմանեան, Յովաննէս Սիմանեան եւ Սիման Սիմանեան

ւոր աշակերտներից էր: Իր ընկե- րասիրութեան ու հարորդասէր բնա- ւորութեան շնորհիւ ջերմ յարաբե- րութիւններ էր հաստատել միւս դասարանների աշակերտների հետ, իսկ Մուսա Լեռցիների հետ՝ մաս- նաւորապէս:

Հաստատութեան մարմնամար- գութեան ու մարզական խաղերի անգուզական դաստիարակ ու մար- գիչ՝ Յակոբ Աճեմեանը, դասարա- նային ֆուլթպոլային խաղերի ըն- թացքում արժէքաւորել էր Յովսէփի խաղային ձիրքը՝ գնդակին տիրապետելու, հակառակորդին շրջանցելու, խաղընկերոջ դիրքը գնահատելու, ժամանակին գնդակը փոխանցելու, դարպասին հարուս- ծելու հնարքները: Եւ Յովսէփը դպրոցի հաւաքականի անդամ: Խա- դադաշտ էինք շտապում Յովսէփին քաջալերելու, իսկ երբ Վոլ՝ էր նշանակում, մեր բացազանչութիւն- ների ձայների ալիքները երեւի մինչեւ Ալեքսանդրէթի հասնում: Հայա Նիկոսիայի խաղադաշտում հաստատութեան հաւաքականի խա- ղը՝ դպրոցների համակրական առաջնութեան աւարտականին, որ- տեղ Յովսէփը դաշտի կեղրոնում խաղն էր ուղորդում՝ յարձակողնե- րին գրոհի դուրս բերելով . . . եւ յաղթանակ:

Ուսումնաւորութեան երկար տա- րիներ եւ Յովսէփը 1944 թուակա- նին, աւարտական քննութիւնների առաջնակարգ գնահատականներով ու համալսարան ընդունուելու քննութիւնների վկայականով մեկ- նեց Պէյրութ՝ ծնողների մօտ: Դի- մաւորողների թուում հայրը չի եղել, զարմացել է, տանը իրեն դիմաւորել է նստած . . . : անդամահատած էին ոտքը, իրեն տեղեակ պահած չէին, յուզախառն գրկել նրան, արցունքներ շաղել այտերին:

Ընդունուել է Պէյրութի ամե- րիկեան համալսարան, քիմիագի- տութեան բաժանմունք: Ֆուլթպոլն էր իր տարերքը, հանգիստ չէին թողել իրեն: Բաղրամեան ֆուլթ- պոլային խմբում կիսապաշտպան էր, աւագը նրա, իր ֆուլթպոլային հրայրքի շնորհիւ նաեւ խմբի տա- րած յաղթանակները՝ փառքով էին պսակել անունը: Հանգիստ չէին թողել նրան նաեւ համալսարա- նում, ընդգրկել էին ֆուլթպոլային խմբում: Հիւրախաղերի էին մեկ- նել Բաղրատ, մրցումը դիտում էր նաեւ երկրի երիտասարդ թագա- ւոր Ֆէյսալը: Յովսէփն էր միակ յաղթական Վոլը՝ նշանակել հա- կառակորդի դարպասին: Ընդու- նելութեան ժամանակ թագաւորը նրան շնորհաւորելով սասել է՝ Վոլ դո՞ւ ես Վոլ՝ նշանակող Ասա-

տը՝,ինք պատասխանել է՝
-Չէ, Չերդ Պայծառափայլու- թիւն, ես Հայ մարզիկ Յովսէփ Ասատուրեանն եմ:

Հայրենիքը կանչում էր իր որդեաց: Յովսէփն էր առաջին արձագանգողներից, նաեւ յորդո- րած համալսարանի քսան Հայ ու- սանողներին՝ ուսումը շարունակե- լու համար մեկնել Հայաստան: Քսան երեք տարեկան Յովսէփը կարաւանապետ եղաւ, քսան ուսա- նողներին ու բազմահազար հայոր- դիներին հայրենիք էր առաջնոր- դում: Այդ կարաւանում եղել է նաեւ Մուսա Լերան Եօղունջուց գիւղի Յակոբ Տէր-Պետրոսեանի ընտանիքը, մօր գրկին մէկ տարե- կան Լեւոնը: Ըստ Յակոբի հայրե- նակիցների մարզարէութեան, այդ մէկ տարեկան փոքր տղան պիտի լինէր հայոց անկախացած երկրի առաջին Լեւոն թագաւոր-նախա- գահը:

Հայոց մայր ոստան՝ Երեւան: Յովսէփը իր քսանը նկերների հետ հայոց համալսարան, դարձեալ քիմ- իագիտութեան բաժնի ուսանող: Ո՞վ էր Յովսէփին թողնում հա- մալսարանի չորսպատերի մէջ, նո- րէն ֆուլթպոլային դաշտէին կան- չում: Հայրենիք էին վերադարձել բազմաթիւ հմուտ ֆուլթպոլիստ- ներ: Հայաստանի Դինամո, Սպար- տակ ակումբների առաջատար խա- դացողներ էին Յովսէփը ու այդ հայրենադարձ ֆուլթպոլիստները, որոնք ի փառս հայրենիքի բազում յաղթանակներ էին նուաճել, Երե- ւանն էր ֆուլթպոլային հանդէսներ տօնախմբում: Յաճախ դիտել եմ ընկերոջս խաղը, կիսապաշտպան խմբապետ էր, պաշտպանների հետ համագործակցութեամբ կասեցնում հակառակորդի գրոհները եւ իր հմուտ խաղով յանկարծակի գրոհի դուրս բերում յարձակողներին:

Մրցումների էին մեկնել Լատվի- ա, Ռիկա քաղաք: Ղարաբաղցի մարաջախտ Բաղրամեանն էր նաեւ դիտում խաղը: Նրա յաղթական աւարտից յետոյ հանդիպում էին կազմակերպել մարաջախտի հետ, շնորհաւորելով թիմապետ Յով- սէփին, հետաքրքրուել հայրենա- դարձ հայերի կեցութեամբ, բարի մաղթանքներ յղել նրանց:

1955 թուականին, Սեւերովսկ քաղաքի խումբի հետ մրցակցու- թեան ատեն, դատաւորի կողմնա- կալ դատավարութեան համար խա- դացողները ու հանդիսականները ըմբոստացել էին, բարձրաբեմերից խուժել մարզադաշտ, խաղը ընդ- հատուել էր, հագիւ էին կարողացել նրանց դատաստանից փրկել այդ

ՏԵՐ ԿԱՆԳՆԻՆՔ ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԻՆ «ՐԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԳԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ»

«Առանց պատմական Հայ Արուեստի ուսումնասիրութեան, արեւել-
եան արուեստների պատմական առեղծուածները լուծել անկարելի է.»
(Յո. Սարգսյան)

ՎԱՐՈՒԺԱՆ ԱԳՇԵՀԻՐԼԵԱՆ
Ճարտարապետութեան Դոկտոր
(Մարտնախուճման խորհրդակցի)

Այս իմբի յուշարձաններից
իւրաքանչիւրը յորինուած ունեն կա-
լաքարի Սանթա Ֆրանչեսկո եւ
Ռապարոլի Սանթա Անճելո եկեղեցի-
ները: Երկու եկեղեցիներն էլ իրենց
յատակագծային ծաւալատարածա-
կան լուծումներով միանալ յորին-
ուած ունեն: Լուկանիայի Ռապարո-
վայրի Սանթա Անճելո եկեղեցու
գմբէթը ունի դարաւանդային (տե-
րասային) կոնաձեւ մակերեսով:
Ընդհանրապէս երկու յուշարձան-
ների թմբուկ-գմբէթ համակարգի
յորինուածքը ակնյայտ աղբիւր ու-
նեն 1215 թուի Անիում կառուց-
ուած Տիրգրան Հոնենցի Սբ. Գրի-
գոր եւ Խորագոյն Հայքի կամ
Տայքի Օշկալանքի եկեղեցիների
գմբէթների յորինուածքային լու-
ծումներին: Մասնաւորապէս Փի-
գալի հինգ նաւանի բազիլիկ կա-
թողիկէի համալիրն ու նրա մկրտա-
րանի համակարգի կառուցների ծա-
ւալատարածական յորինուածքնե-
րը, Անիի Մայր, Սբ. Ամենափրկիչ
եկեղեցիների Հայկական ճարտա-
րապետութեան ակնյայտ ազդեցու-
թեամբ կառուցուած յուշարձան-
ներ են:

Հոռմի Յուլիոս Բ. Պապի (1503-
1513 թուականներին) որոշմամբ,
լատինական բազիլիկ Սբ. Պետրոս
եկեղեցու տեղում նոր եկեղեցի
կառուցման նպատակով յայտա-
րարուած «լաւագոյն նախագծի»
մրցութիւն ներկայացուած հինգ նա-
խագծերից որպէս ժամանակի ոգուն
համապատասխանող գաղափար ար-
տայայտող յորինուածք ունեցող նա-
խագիծ, ընտրուել է Միքելանջելո-
յի ներկայացրած նախագիծը, որը,
ըստ հուլիոս Հայկական կեդրո-
նագմբէթի «Բագարանեան» յորին-
ուածք ունեցող կառուց էր: Դա ո՛չ
միայն պահպանողական կղերակա-
նութեան դէմ ըմբոստացման երե-
ւոյթ՝ այլեւ նորագոյն գաղափարա-
խօսութեան հուլիոսը արտայայ-
տող իւրաքանչիւր յուշարձանի իրա-
կանացումն էր:

Իտալիայի առաջին կեդրո-
նագմբէթի Ֆրենցիսկո Սանթա
Մարիա տէլլի Անճելի օրատորիա-
յին եւ Պացցի Կապելլայի հետեւած
Հոռմի Սբ. Պետրոսի, Մանթովայի
Սանթա Անտրէա եկեղեցիների յո-
րինուածքի ազդեցութեամբ Հոռ-
մում Վինիոլայի նախագծով 1668
թուին կառուցուած ձեզու Պամպի-
նոն (Արա Չելի) նմանատիպ պաշ-
տամունքային շինութիւնների թու-
միակն էր, ո՛չ միայն իտալիայում,
այլեւ ողջ եւրոպական երկրնե-
րում, որի նախատիպն էր հանդի-
սացել հազար տարի առաջ 668
թուին կառուցուած Արուծի «գմբէ-
թաւոր դահլիճ» եկեղեցին: ձեզուի
գմբէթաւոր դահլիճ եկեղեցու
իրականացումը՝ հազար տարի մինչ
այդ Բագարան-Արուծ եկեղեցիներ-
ի յորինուածքների ազդեցութիւնը
լինելով հանդերձ, Հայկական ճար-
տարապետութեան եւ իտալիայում
վերածննդեան հասկացողութեան
ների հարազատութեան փաստարկն
են: Այս հարցադրմամբ, Յ. Սարգի-
զովիկին գրել է, որ, Գմբէթը
յաղթահարեց բազիլիկը եւ արմա-
տախիլ արեց հելլենիստական-ատ-

րական յարդարանքները: Հայ ժո-
ղովուրդը մնաց չաւերժ իր գեղար-
ուեստի մէջ մարմնացած:

Չնայած, որ իտալիայում կեդ-
րոնական-կեդրոնագմբէթ յատա-
կագծով պաշտամունքային շինու-
թիւնների հետագայ իրականաց-
ման սահմանափակումներին, այն-
ուամենայնիւ 17րդ դարաշրջանի
սկզբից իտալիայում վերստին
սկսուեց իրականացուել կեդրո-
նագմբէթ պաշտամունքային շի-
նութիւններ՝ Barocco ոճի արտա-
յայտաձեւերով: Դրանցից է Հոռմի
Սբ. Լուքա Մարթինի եկեղեցին՝
կառուցուած 1635-1650 թուական-
ներին, որն իրենից ներկայացնում
է քառակուսի յատակագծում ներգծ-
ուած հաւասարակազմ խաչ, ներ-
քուստ կիսաբոլորակ, քառախո-
րան, կեդրոնագմբէթ կառուցուածք:
Կառուցուածքը իր ծաւալատարա-
ծական ամբողջական յորինուած-
քով ակնառու աղբիւր ունի Հայկա-
կան նմանատիպ յուշարձաններին:

Վենետիկում, Մեծ Ջրանցքի
ափին, 1630-1631 թուականներին
կառուցուած Սանթա Մարիա տել-
լա Սալութէ եկեղեցին, յատակագ-
ծում ությանի կառուցուածք
է: Ներքուստ, առանձին կանգնած
ուժեղացուած ութ մոյթերով տա-
րածքը բաժանուած է երկու մասե-
րի՝ կեդրոնական եւ շրջանց՝ երկ-
յարկանի սրահի: Այն, ըստ հու-
լիոսի, իր յորինուածքով Ասիսի
պալատական մատուռի ազդեցու-
նիւնն ունի, որն էլ հիմք է ունեցել
Հայկական 7րդ դարում կառուց-
ուած Եղվարդի Ջորամբ եւ Իրին-
դի Սբ. Աստուածածին եկեղեցիներ-
ի յորինուածքային մտայղացում-
ները:

Մագրիդում՝ Պերնանտինեան
վանքային միաբանութեան համա-
լիրում 1617ին կառուցուած Ալկա-
լա տը Հենարէս եկեղեցին իր
ճարտարապետական, ծաւալատա-
րածական-յատակագծային յորին-
ուածքով ուշագրաւ յուշարձան է:
Յուշարձանը լինելով կեդրոնագմ-
բէթ՝ ակնյայտ աղբիւր ունի Հոլի-
սիմէատիպ պաշտամունքային կա-
ռուցների ծաւալատարածական յո-
րինուածքով յուշարձանները:

Նափոլիի Սբ. Ալեսանդրո եկե-
ղեցին, որն իրականացուել է 1762
թուին, ներկայացնում է կեդրո-
նագմբէթ կառուց՝ վրաստանում
Կվետերի եւ Արցախի 5րդ դարում
իրականացուած «Օխոր Դոնեվան-
քէ եկեղեցիների յատակագծային
յորինուածքի ակնյայտ կրկնողու-
թեամբ (վերջինս նախատիպ է
հանդիսացել Հոլիսիմէատիպ կա-
ռուցների ստեղծման) Սարգի-
զովիկի բնորոշմամբ «Այդ յատ-
կապէս Հայկական տիպ է, Իսպան-
իայում՝ Ալկալա տը Հենարէսը եւ
Իտալիայում՝ Սբ. Ալեսանդրո եկեղե-
ցիները:

Հոռմի Վենետիկեան պալա-
տում 1968ին բացուած Հայ ճար-
տարապետութիւնը 4-18 դարերու-
մ ցուցահանդէսի առթիւ Միլանի
Բրերա Ակադեմիայի տնօրէն՝ Գարլո
Պերոգալլին, իր ելույթում բնորո-
շելով Հայ ճարտարապետութեան
ազդեցութիւնը իտալիայի միջնա-
դարի ճարտարապետութեան վրայ,
նշել է «Թոյլ տուէք ինձ մի միտք՝
եթէ գոյութիւն ունի մի հարց, որի
դէպքում մենք՝ իտալացիներս, հա-

մաձայն չենք գիշումներ անելու,
դա վերածննդի իտալական լինելն
է: Ես չեմ ուզում պատուէջ հարց
շօշափել: Յամենայնդէպս, ձեզ հրա-
ւիրում եմ խորհել այստեղ ցու-
ցադրուած կեդրոնական գմբէ-
թով կառուցների որոշ յատակագ-
ծերի շուրջ: Կարծում եմ պատա-
հական երեւոյթ է այն, որ իտա-
լական միջնադարի որոշ յուշար-
ձաններ շատ են նման Հայկականին,
օրինակ՝ Կապալէ Մոնֆերրատո-
յում՝ Սանթա Էյվազիոյի մուտքի
սրահը իր հատուող կամարների
համակարգով նման է գուտ Հայկա-
կան գաւիթներին: Ալեսին, Հայկա-
կանին նման են իտալիայում 15րդ
եւ 16րդ դարերին նախագծուած
ո՛չ սակաւաթիւ շէնքեր եւ օրինակ
Կրեմայի մատուռը: Քառակուսու
վրայ բացուող գմբէթի թեմայի
գիւտը չէր կարող չմտահոգել Լեո-
նարդոյին, դա հնարել էին Հայքը,
Իսկ ինքը Հայքից վերցնելով նոյն
թեման, զարգացրել եւ դարձրել է
համաշխարհային իրողութիւն:
Նման վերամշակումը ո՛չ մի կերպ
չի՛ նսեմացնում մասնակիցներին,
նոյնը արել է Բախը Վիվալդիի
թեմաներով»:

Ներկայ ուսումնասիրութեան
ընթացքում համեմատելով Հայ գաղ-
թականների շարժումները, նրանց
եւրոպական մայր ցամաք թա-
փանցման, ոճերի սկզբնաւորման
ու զարգացման ընթացակարգը,
բացայայտում է, որ հենց այդ
ժամանակաշրջաններում է ի յայտ
գալիս ճարտարապետական ազդե-
ցութիւնների առկայութիւնը: Ի
հարկէ, հեռու ենք այն մտքից, թէ
ազդեցութիւններ կրած բացայայ-
տած կառուցները արդիւնք են
որպէս միայն Հայ մարդու արհես-
տաւորների-որմնադիրների ճար-
տարապետների ձեռքի գործ: Սա-
կայն, փաստարկուած է, որ ուսում-
նասիրութեան ընթացքում ճար-
տարապետական յուշարձաններում
առկայ են ազդեցութիւններ, իսկ
դա ինչպէ՛ս, ե՛րբ եւ ու՞մ կողմից
է իրականացուած, բացայայտելու
խնդիր է:

Արեւմտաեւրոպական երկրնե-
րի, մասնաւորապէս վերածննդի
հայրենիք՝ իտալիայի վրայ Հայկ.
ճարտարապետութեան եւ մշակու-
թի ազդեցութեան հարցադրումնե-
րի առնչութեամբ, Վ. Չարլյանի
Հայկական Ռենեսանս (էջ 200-222)

եւ Հ. Իսաբելեանի «Հայկական
Ռենեսանսի ճարտարապետութիւ-
ն» (էջ 138), մենագրութիւնները
ծանրակշիռ ներդրում են հարցադ-
րումների փաստարկման առնչու-
թեամբ, միեւնոյն ժամանակ երկու
հեղինակներն էլ, տարբեր տեսան-
կիւններով մօտենալով բարձրաց-
ուած խնդիրներին, ունեն միեւ-
նոյն կողմնորոշման բովանդակու-
թիւն, ապացուցելով որ, Ո՛չ մի
ազգային ստեղծագործութիւն ինչ-
քան էլ դառնայ համընդհանուր
սեփականութիւն, չի դադարում
ազգային լինելուց՝ իրականում
Արեւելքն էր, որ ակնյայտ չափով
հող նախապատրաստեց այդպիսի
անցման համար, ստեղծեց նոր
բուրժուական հասարակութեան
նիւթական ու հոգեւոր մշակույթի
մի ինչ որ չափով կոնկրետ նա-
խագրեալներ: Այս իմաստով Արեւ-
մուտքը յաջողուած է Արեւելքին:
Այն բոլորը, ինչ արուել է Արեւել-
քում, անհրաժեշտ սկիզբ է ծառա-
յել Արեւմուտքի համար: Մասնա-
ւորապէս ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ Արեւ-
մուտքում Արեւելքի վերածննդի
շարունակութիւնն էր, իր զարգաց-
ման նոր բարձր էտաբով: Որպէս
լրացում այս մտքերին, Յ. Մա-
նանդեան նշել է, Անիի Բագրա-
տունեաց Հայաստանի քաղաքների
կեանքը գտնուում էր զարգացման
աւելի բարձր մակարդակի վրայ,
քան Արեւմտեան Եւրոպայի միջ-
նադարեան քաղաքներին... (էջ
215), դրանով իսկ հաստատելով
արուեստաբան Հ. Վ. Հատկիկի
եզրակացութիւնը, թէ, Արեւմուտ-
քի վերածննդի ճանապարհը ան-
ցել է Արեւելքի վրայով:

Անդրադառնալով Հայ գաղ-
թականութեան առաջացման ընդ-
հանուր պատմական ժամանակաշր-
ջաններին, ուղղութիւններին, տա-
րածման ոլորտներին յանգում ենք
հետեւեալին.-

1.- Հելլենիզմը ստեղծուել է
յունական արուեստի ու ճարտարա-
պետութեան եւ գրաւեալ տարածք-
ների, պետութիւնների, ժողովուրդ-
ների տեղական արուեստի ու ճար-
տարապետութեան պատուաստու-
մից:

2.- Բիւզանդական արուեստը
որպէս այդպիսին գոյութիւն է
ունեցել, դա Բիւզանդական կայս-

Մար. ք էջ 19

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Fax: -----

ՀԱՅԻ ՄՐՏՈՎ ՅԱԷՐԺԱԽՕՍ ՍԱՐՈՅԵԱՆԸ

ՄԵՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սարոյեանի իւրաքանչիւր այցելութիւն Հայաստան տուն էր ժողովրդի համար: 1935-ին, արեան կանչով, առաջին անգամ եկաւ Հայաստան, հենց որ «ճանապարհին համար դրամ» ունեցաւ: 1978 թ. աշնանը Սարոյեանը եկաւ չորրորդ եւ աւագ, վերջին անգամ: Տողերիս հեղինակը երջանկութիւն է ունեցել գոնէ հպանցիկ շփուելու Սարոյեանի հետ: Սիրով թանկագին մատուցի պէս պահուած է միայն ծոցատետրն ու գրիչը, որին Սարոյեանի ձեռքն է դրուել:



1978 թ. Հոկտեմբերի 16-ին Երեւանի պետական համալսարանի դահլիճը նման էր աշխոյժ մեղափեթակի: Սարոյեանի ոգին ու ձայնն էր տիրաբար թեւում դահլիճում: Հպարտութեամբ էր խօսում ճշմարիտ հայերի ոգեղէն հարստութիւնների՝ խղճի, ազնուութեան, խիզախութեան, մաքրութեան ու բարութեան մասին: Ուսանողներին նա իր մտերիմ բարեկամները համարեց, մանաւանդ որ «ինքս ալ երիտասարդ կը զգամ ինձի...»:

- Ձեր ամենաբարձր գրական հաճոյքը, - հարցրին:

- Աղուոր գիրք կարգալը, - պատասխանեց:

Իր գրական ազդեցութիւնների եւ համակրութիւնների մասին տրուած հարցերին պատասխանելիս նշեց Մարկ Տուէյնին, Դիկենսին, Ջեկ Լոնդոնին, Մոպասանին, Ուոլթ Ուիթմենին, Ջոյսին, Չեխովին, Գոգոլին:

- Իսկ Շեքսպիր ու Տոլստոյ հետս կը լինեն մինչեւ կեանքիս վերջը: Շատ ընդգծուած ասաց նաեւ, որ՝ «աշխարհը պիտի Նարեկացի իմանայ...»:

Հարցրին.

- Դուք հաւատո՞ւմ էք Աստծոյ գոյութեանը:

- Շատ կ'ուզէի, որ Աստուած ըլլար, - ասաց, ձեռքերը վերեւ կարկառելով: Ես նրան կ'ուզեմ մարդկանց շարքին մէջ տեսնել: Ու թէ հանդիպեմ անոր, կ'ըսեմ՝ «Բարեւ»:

Վերջում ուսանող երիտասարդներին պատգամեց՝ երբեք չենթարկուէք յուսահատութեանն ու հիասթափութեանը:

Քիչ անց ռեստորանում հիւրընկալեցին Սարոյեանին: Չուզեցի ձեռքից բաց թողնել բարեպատեհ առիթը եւ ինքս էլ ծանօթ լրագրողների հետ ներս մտայ: Այստեղ դրութեան տէրը կրկին Սարոյեանն էր: Հրճուալի աղմուկով էր լցուել ընդարձակ սրահը: Մանկան պէս բերկրում էր Սարոյեանը: Մեծ ախորժակով էր ճաշակում «հիանալի, պատուական» գինին ու մրգերը, այնպիսի ախորժակով, որ «Աստուածն էլ տեսնի, զարմանայ»: Աշխոյժ, սրամիտ պատասխաններ էր տալիս իրեն շրջապատող պրոֆեսորների հարցերին, մակագրում նրանց ներկայացրած գրքերը: Սեղանից բաժանուէլիս, մանկական անհոգութեամբ, նա՝

այդ պատկառելի մարդը, բոլոր գրպանները լցրեց շողշողուն տանձերով ու խնձորներով՝ ասելով.

- Է՞, ես ձեզի նման չեմ ամչնար:

Համալսարանի միջանցքով քայլում էր բոլորից արագ: Ու կրկին, կրկին տիրաբար որոտում էր նրա թաւ ձայնը: Ելքի մօտ մի տարի քաւոր մարդ Սարոյեանին հարցրեց, թէ ճիշտ է, որ տեսել է գորպուտ Անդրանիկին:

- Այո, Ամերիկա սրճարանին մէջ նստած եմ: Սափրիչին մօտ ալ: Այն ատեն 14-15 տարեկան էի: Հետը գրուցել եմ: Զօրաւոր մարդ էր Անդրանիկ, սակայն կը ցաւիմ, որ տխուր էր, քանզի հարցերուն միշտ լուրջ կը պատասխանէր: Անդրանիկին մասին գրութիւն ունիմ:

Ես խնդրեցի ինքնագիր թողնել ծոցատետրում: Սիրով կատարեց: Մի ուսանողուհի մօտեցաւ, խնդրեց, որ Սարոյեանը մակագրի հենց պայուսակի վրայ: Սարոյեանի ամերիկեան նրբագեղ գրիչը առաջին իսկ տառի վրայ թաղուեց պայուսակի փափուկ կաշուի մէջ եւ որքան էլ փորձեց, այլեւս առաջ չգնաց: Ես գրողին մեկնեցի իմ խորհրդային արտադրութեան կոպիտ ու հասարակ «երեք կոպեկանոց» գրիչը: Իմ գրիչը Սարոյեանի ձեռքում ահօսելով այնպէս սահուն գրեց, որ գրողը բարձրաձայնեց հիացմունքը:

- Օ, սա ինչ աղուոր գրիչ է, - ասաց ու վերադարձրեց ինձ, իսկ պայուսակը՝ աղջկան:

- Հիմա իմն է աշխարհի թանկ պայուսակը, - յուզուած բացականչեց ուսանողուհին:

- Աղուոր աղջիկս, անունդ ի՞նչ է, հո՞ս կը սովորես: Անգլերէն:

Ու սկսեցին խօսել անգլերէնով:

- Հաւանեցայ քո անգլերէն, բայց խօսինք մեր մայրենի հայերէնով: Ապա. - Անուշ աղջիկս, հօր իրաւունքով կ'ուզեմ համբուրել այստղ... - Խնդրեմ, - ասաց աղջիկը սիրայօժար:

Սարոյեանը համբուրեց աղջկայ այտերն ու ներողութիւն խնդրեց, որ «սա բեղեր քիչ մը կը խանգարին»:

ԵՐԿԻՕՍՈՒԹԻՒՆ ԹԵՔԵԱՆ ԲԱՆԱՍԵՂԾԻՆ ԴԵՏ (ԾՆՆՈՒԵԱՆ 135-ԱՄԵԱԿԻՆ ԱՈՒԹՈՎ)

ԱՐԱՄ ՄԵՓԵԹՅԱՆ

Գիշեր մըն է այս՝ լուռ ու հանդարտ, յար եւ նման իմ այն գիշերներուս, երբ նստած գիրքերուս հետ դէմ առ դէմ, կը թղթատեմ զանոնք ես, ինչպէս՝ կեանքը մարդերուն:

Եւ ահա գիրք մը՝ որ ձեռքս է այս պահուս, քո՛ւ գիրքդ վարպե՛տ, քու հոգիդ, քու կեանքդ որ այս թուղթին ես յանձնեմ: Դուն տարիներով գրեցիր անընդհատ «հոգիներու բարեկամութեան»ը համար, ինչպէս սովոր էին ըսել, եւ ամէն էջ, ամէն տող, ամէն բառ քու գիրքէդ, կենդանի վկան է քու մտածումիդ, քո՛ւ ապրումներուդ:

Եւ ի՞նչ ըսեմ վարպետ, այս ապրիլեան գիշերով, երբ տակաւին հոգիս անհանդարտ է ու խռով: Տո՛ւր ինձի խաղաղութիւն քու հոգիէդ որ անմահ է. չէ՞ որ հոգին ալ լոյսի նման չէ կարելի թաղել, դամբանե՛լ:

Ու հիմա, երբ կը բանամ գիրքդ, կը տեսնեմ քեզ նստած ու «մէկ հատիկ»դ յառած մատներուդ, որոնք գիր կը գրեն, հնազանդելով քու ստեղծագործ միտքիդ, որպէսզի քու փառքդ կերտես, իբրեւ հաւասարապէս մե՛ծ Հայ, Բանաստեղծ ու Մարդ:

Դո՛ւն մարգարէ մը, որ մեր ահաւոր եղեռնէն անմիջապէս ետքն իսկ ունեցար տեսիլք մեր կեանքին, հայուն վերածնող կեանքին Բանաստեղծներու իշխանը՝ «Հրաշալի յարութեան»ը: Վահան Թէքէեան Դո՛ւն, խորհրդանիշը Սփիւռքի մեր անտուն կեանքին:

Դո՛ւն, բանաստեղծ հայերգութեան ու սիրոյ տաճարին:

Թոյլ տուր ինձի, որ այս գիշեր քեզմով լեցուիմ, քեզմով արբենամ, եւ իմ հոգիս քեզի գայ երկիւղած ու ծնրազիր:

Ես քուկը եմ այս գիշեր, իսկ դուն իմս: Ու ես ամէն անգամ որ բանամ շրթներս առ քեզ, քու բառերովդ քեզ պիտի երգեմ ու ըսեմ՝ «Ինչ որ տուիր, կը դարձնեմ զայն քեզի...» չէ՞ որ, իմ այս գիշերս ես քեզի եմ ձօնեմ:

Գիտեմ, տարիներ առաջ, երբ «Տաղարան»իդ վերջին էջն ալ դարձուցիր, անակնկալօրէն քու «մէկ հատիկ»դ փակուեցաւ այս աշխարհին լոյսին ու ստուերին, զարնանային առաջին գիշերներէն մէկուն, ապրիլեան գիշեր մը:


Ու հիմա ես նստած ճիշդ դիմացը նկարիդ, կը զգամ թէ «Քու յիշատակը այս գիշեր գիս լալու չափ կը յուզէ...»: Կը մտնեմ պահ մը քու կեանքիդ պարտէզէն ներս, ու կը թողում որ ակնարկս իր պտոյտը կատարէ, լ՛ուռ ու միայնակ:

«Քեզի նման ու քեզմով կը նայիմ ես ալ վերադ, Երկարօրէն, ծանրօրէն...»:

Ու կ'երեւակայեմ քեզ պահ մը: Նախ տղու հոգիդ կը գտնեմ ես, կեցած իմ դիմաց, ու կը տեսնեմ քու վրադ այն բոլորը որ կը հայացնեն քեզ:

Տառապեցար դուն եւ այնքան աւելի՛ որքան մեծցար, դարձար երիտասարդ ու տառապանքով ազնուացաւ քու հոգիդ. հայ էիր, ու մնացիր հայ, եղար մա՛րդ, զգեցած վրադ ամբողջական իմաստն անոր, ու քու «Հրաշալի Յարութիւն» ովդ եղար բանաստեղծ, «Իրա՛ւ» բանաստեղծ:

Դո՛ւն, երիտասարդ մը դեռ, նման այն բոլոր տղոց, սիրեցիր



կեանքը անյագօրէն, փարեցա՛ր անոր ամբողջ գորութեամբը հոգիիդ: Սիրեցիր հայրենիքդ, որուն ... «միտքէդ առաջ, սիրտդ փարեցաւ»:

Սիրեցիր քու «ծննդավայրը՝ հոգուդ» գոր «կը տեսնես աչքդ գոց»... «Որուն ետեւ սկիհին մէջ, կ'իջնէ ինքը Աստուած»... Եւ քու սէրովդ սիրցուցիր մեզի ա՛յն, որ իր «Մէն մի քարին տակ գետնի, դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»:

Սիրեցիր՝ դուն վարպետ, ինչ գիտնամ, գաղտնի սէրով. չէ՞ որ ըսիր՝

«Մէրս այն դուռն էր կարծես Ուրկէ ոչ ոք մըտաւ ներս, Ծաղիկներով ծածկուած՝ Գաղտնի պարտէզ մըն է սէրս»:

Այլապէս պիտի չըսէիր յետոյ՝ «Ես սիրեցի բայց ոչ ոք Սիրածներէս գիտցաւ թէ Ձինքը որքան սիրեցի. Ո՞վ կարգալ սիրտը գիտէ...»

Եւ այդ սէրէն ետք գաղտնի, գաւակ մը ուզեցիր. ու պոռացիր քու տեսնող Անտր որ «զլացաւ քեզի... գաւակի մը շնորհն անգամ» ու յետոյ դուն տրամագին երգեցիր՝

«Օտար տղոց աչուրներուն, հոգուդ մէջ

Դողդղղազին պիտի տղաս որոնեմ,

Եւ անձանօթ պիտ մեռնիմ անոնց դէմ...»

Իսկ երբ գտար դուն քեզ տղու մը դիմաց, քու ակնարկդ յառած անոր՝ շնչացիր՝

«Եկուր, անցեալս ու ներկադ թող գրկուին գաղտնապէս»:

Ու մինչ հոգիդ կ'աճէր իր յոյզերով եւ յոյսերով, յանկարծ աշխարհ տակնուվրայ եղաւ:

Գացին անհետ քու գրչեղբայրներդ բոլոր, ազգդ կիսուեցաւ եւ դուն եղար տարագիր՝

Նեղոսի ափին: Քու հրդեհ-ուած հոգիդ, գոռաց թուրքին երեսին՝

«Պիտի ինչաս, կ'ի՞նչաս ա՛լ... Բայց որպէս զի դեռ ճանչնաս Քու անարգ սիրտը ծակող մեծագոյն ցաւը վերջին՝

Պիտի զարնեն քեզ անոնք որ քեզ յաճախ փրկեցին...»

Իսկ յետոյ քու ալեկոծ ու խռով հոգիով ըսիր՝ Աստուծոյ՝ «- Մեզ դըժոխք, դըժոխք դրկէ՛ անգամ մ՛ ալ,

Չէ՞ որ զայն լաւ կը ճանչնանք, զայն ճանչցուցիր մեզ շատ լաւ,

Եւ թուրքերուն յատկացո՛ւր արքայութիւնդ անբաւ...»

Կարելի՞ էր արդեօք ասկէ աւելի խօսու՛ն, կենդանի՛ բառերով արտայայտել մեր ցաւը, դժոխային

Ո՞Վ ԱՐԳԵԼԵ ԿՐ ԶԱՆԴԻՍԱՆԱՅ ՅԱՌԱԶԴԻՍՈՒԹԵԱՆԴ

Ինչպէ՞ս կ'ըլլայ եթէ մէկը արգիլէ քեզի յաջողութիւն իրագործելու: Ինչպէ՞ս կ'ըլլայ եթէ անձ մը ամէն անգամ թափած ջանքերդ քանդէ: Զգացումդ ի՞նչ կ'ըլլայ այս անձին նկատմամբ:

Ինչպէ՞ս կ'ըլլայ եթէ այդ անձը պատճառներ ներկայացնէ քեզի վճռակամութիւնդ կասեցնելու ու միշտ փորձէ արգելք հանդիսանալ գործդ կատարելու: Եւ, ի վերջոյ, ինչպէ՞ս կ'ըլլայ եթէ այս անձը դուն ինքը ըլլաս:

Հաւանականութիւնը մեծ է, որ դուն անձիդ յոռեգոյն թշնամին ըլլաս երբ հարցը վերաբերի հետեւողականութեան եւ յաջողութիւն արձանագրելու: Ի միջի այլոց, կը չիշե՞ս երբ դուն քեզի այսպիսի արտայայտութիւն մը ըրած ես. «Բնաւ չեմ կրնար այս մէկը կատարել» կամ «բնաւ այս բանին պիտի չտիրանամ»:

Քու մէջը եղող այս տկար ձայնը անկեղծ կասեցում մըն է նպատակներուդ իրագործման ճամբուն վրայ, եւ որ միշտ կու գայ տասնեակ պատճառներով ու պատճառաբանութիւններով՝ այդ նպատակները իրագործելու անկարողութեան մասին: Եթէ անցեալին չստացար ակնկալուած արդիւնքները, անոր պատճառը կապանքներն են, զորս մտքիդ մէջ կը դնես եւ որոնք միշտ կը հասցնեն անել ճամբաներու եւ սահմանափակ արդիւնքներու:

Խնդրեմ, մի քանի վայրկեաններ տրամադրէ մտքիդ մէջ դրածդ մտածումները քննելու: Այս մտածումները դրակա՞ն են արդեօք: Աւելի կը նախատեսես շահի՞ր (կամ իրագործել) թէ պարտուի: Կամ ավելի ժխտական ըլլա՞ն համար, ավելի կը նախատեսես պարտութիւնը (կամ ձախողութիւնը) թէ յաջողութիւնը:

Կ'ուզե՞ս գլխաւոր պաշտպանը

ԲՐԻՆՁԻՆ ԵՒ ԳԱՐԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

* Բրինձ.- Խոնաւութիւն եւ տաքութիւն սիրող այս բոյսը տարածուած է հարաւ արեւելեան երկիրներու մէջ: Բրինձը կը կերակրէ մարդկութեան կէսը, այն՝ օգտագործող ամէնէն հին հացազգիներէն է: Բրինձը կ'աճի ամբողջ տարին: Կը պարունակէ 75% ածխաջրատ, որմէ օսլայ՝ 58-60%, փրոթէին՝ 7-8%: Բրինձին քիմիական կազմը կախում ունի թէ ինչպէս եւ ինչ ձեւով մշակուած է:

Արեւելքի ժողովուրդներուն մօտ բրինձը կը համարուի կենցաղի, փիլիսոփայութեան եւ կրօնական խորհրդանիշ:

Մանդական տեսակէտէ աւելի օգտակար է թուի բրինձը:

Ըստ չինական բժշկութեան, որուն հիմքը կը կազմէ երնը եւ եանը, բրինձի այդ երկու սկզբունքները հասած են կատարելութեան, այդ պատճառով բրինձը կը համարուի չափազանց օգտակար ուտելիք:

Յղկուած եւ փայլուն հատիկները աւելի երկար կը պահպանուին: Սակայն յղկելէ ետք, բրինձը կը կորսնցնէ օգտակար նիւթերու կա-

ըլլալ քեզ շրջապատող կապանքներուն: Անշուշտ ոչ, միայն երեւակայէ ինչ բաներ կրնաս իրականացնել եթէ ինքզինքիդ նեցուկ կանգնիս հարիւր առ հարիւր տոկոսով: Ուրեմն, դադրիր ինքզինքդ կապանքի տակ առնելէ, եւ սկսիր կեանքիդ մէջ գործունէութիւններ կիրարկելու, աւելի ընդարձակ հեռատեսութեամբ:

Ինչպէս Հենրի Ֆորտ ըսաւ. «Դուն այն անձն ես, զոր կը կարծես որ դուն ես»: Այսինքն՝ եթէ ինքզինքդ յաջող կը կարծես, ապա յաջողութիւն պիտի իրագործես, որովհետեւ ամէն կարելին ի գործ պիտի դնես նպատակներդ իրականացնելու եւ անոր պիտի տիրանաս ուշ կամ կանուխ: Սակայն եթէ կը կարծես, թէ ձախող անձ մըն ես, ապա այդպէս կ'ըլլաս, որովհետեւ յետարձի վրայ պիտի կեդրոնանաս, փոխանակ պէտք եղած գործը կատարելու:

Սահմանափակ մտածողութիւնը յաղթահարելու լաւագոյն միջոցը յաջող անձերու մասին խթան հանդիսացող գրութիւնները կարդալն է. անձեր՝ որոնք ոչինչէն սկսած են եւ ունէին միայն հաւատք մը, որ իրենց երազը իրականութիւն դարձնելու կարողութիւնը ունին իրենք:

Այսօր առիթը ունիս դէպի առջեւ յառաջանալու, մարտահրաւէրները դիմակալելու, որպէսզի դառնաս այն անձը՝ զոր դուն միշտ ալ գիտակցած ես թէ կրնաս ըլլալ: Հետեւաբար, ճամբուն վրայ յաջող քայլը ա՛ն, որովհետեւ դուն ունիս կեանքի մէջ ունեցած ցանկութիւնները իրականացնելու բոլոր կարողութիւնները:

Արդարեւ, ուղեւորութիւնը սկսիր քու անձիդ հանդէպ հաւատքով եւ գործին մէջ յարատեւ՝ դէպի նպատակներուդ իրագործումը, անշուշտ նախ վստահելով Աստուծոյ վրայ:

րեւոր մասերը: Բրինձին կեղեւը հարուստ է B1, B2, PP կենսանիւթերով, ֆոսֆորի փիտներով, որոնք ունին ճարպերը քայքայող յատկութիւն:

Բրինձը հեշտ իւրացողող սննդամթերք է, անոր եփուկը հարուստ է օսլայով, որուն համար ան օգտակար է որպէս սնունդ ստամոքս-աղիքային հիւանդութիւններու եւ աղերու կուտակման ժամանակ: Ան ըլլալով դիւրամարս սնունդ, օգտակար է ծանր հիւանդութիւններէ ետք: Բրինձի մշակումէն կը ստանան ալքոհոլ, օսլա:

* Գարի.- Կը պարունակէ մինչեւ 30% ածխաջրատ, 20% փրոթէին, հարուստ է փոթաւիտամիւլ եւ երկաթով. ունի հակաբորբոքիչ եւ փափկացնող յատկութիւն:

Ըստ հին յունական բժշկութեան, ան կը սրէ տեսողութիւնը, կ'ապահովէ երկարակեցութիւնը: Գարին կը գօրացնէ կազարտադրութիւնը, ունի միզամուղ, հակաալերժիք յատկութիւն, սակայն երկարատեւ օգտագործման ժամանակ կը թուլացնէ սեռական կարողութիւնը:

ՄՏԱՅՈՒԹԵՆԵՆ ԵՒ ԸՆԿՈՒԱԾՈՒԹԵՆԵՆ ԶՆՈՒԲԱԶԱՏՈՒԵԼՈՒ ՅԱՄԱՐ

Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը արձակած է շարք մը ցուցմունքներ, խրատներ եւ որոշ կիրարկումներ՝ ձերբազատուելու համար մտահոգութենէն եւ ընկճուածութենէն, եւ վայելելու համար մտքի հանգստութիւն եւ ջիղերու հանդարտութիւն: Այս կիրարկումներն են հետեւեալները.

1) Նստիր հանդարտ սենեակի մը մէջ, որուն լոյսերը ըլլան թեթեւ, եւ ապա փորձէ կարելի եղած չափով ոչ մէկ բանի մասին մտածել:

2) Աչքերդ գոցէ, խորունկ շունչ առ եւ փորձէ շունչդ բռնել մօտաւորապէս 10 երկվայրկեանի համար, որմէ ետք դանդաղօրէն արտաշնչէ: Հանգստացիր, երեւակայէ որ լարուածութիւնը մարմինէդ կը հեռանայ:

3) Մարմնիդ բոլոր մկանները պրկէ եւ ապա հանգչիր: Այս միջոցին, երբ այս գործողութիւնը երեք անգամ կրկնես, փորձէ որ միտքդ դատարկ ըլլայ բոլոր գեղղումներէն: Թոյլ տուր որ գաղափարները ինքնաբերաբար գան ու երթան, ոչ մէկ բանի վրայ կեդրոնացիր:

4) Յստակ պատկերով մը երեւակայէ, թէ փափկացնող ջերմ գգացում մը կ'երկարի մարմնիդ մէջ, սկսելով ոտքիդ մատներէն հասնելով

մինչեւ գլուխդ: Ինքզինքիդ շարունակ ըսէ. «հանդարտիր, հանգչիր եւ ընթացք ա՛ն»:

5) Պատկերացուր, որ այս գգացումը կը պատէ ամբողջ մարմինդ: Երեւակայէ, որ լարուածութիւնը լքեց մարմինդ: Այս վիճակին մէջ սիրտդ կանոնաւոր ձեւով պիտի բաբախէ, թոքերդ օդով պիտի լեցունին, դիւրութեամբ պիտի շնչես եւ հանդարտութիւն պիտի տիրէ: Ոչ մէկ բանի մասին պիտի մտածես, միտքդ հանդարտ եւ մարմինդ ամբողջութեամբ հանգչած պիտի ըլլան, գերծ ամէն լարուածութենէ:

6) Մէկէն մինչեւ քսան համրէ եւ պատկերացուր որ մկաններդ հետդ կը մըցին մինչ դուն կը մօտենաս թիւ 10ին: Յիշէ որեւէ բան որ կը կատարես հանդարտելու համար եւ այդ պատկերին վրայ մնացիր նոյնիսկ մարմինդ հանգչած գգալէ ետք:

7) Ոտքի կանգնել առաջ ինքզինքդ պէտք է վերադարձնես մտաւորաբար թեթեւ վիճակին: Սկսիր դանդաղօրէն մէկէն մինչեւ քսան համրել եւ ինքզինքիդ ըսէ. «Երբ համրանք թիւ քսանին հասնի, աչքերս պիտի բացուին եւ արթուն վիճակի մէջ պիտի ըլլամ»: Մարմնիդ բոլոր մասերը հանդարտած եւ սովորական պիտի ըլլան:

ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆ ԹԵՔԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՅԵՏ

Շաբաւակուած էջ 16-էն

մեր կեանքը, վարպե՛տ, կարելի՞ էր: Իւրաքանչիւր հնչեակ քեզմէ բաբախող սիրտ մըն է, որմէ կարելի չէ զիր մ'իսկ գեղջել: Դուն նման ես զգայուն ջերմաչափի մը, մեր ճակատագիրին էլեւէջները արձանագրող, զգացումով, հոգիով, կեանքով տրոփուն: Կու լա՛ս դուն, կ'աղաղակես մեր ազգին ցաւին դիմաց: Բայց չես վիրաւորեր, յուսահատ ճիչեր կ'արձակես, սակայն չես ամչցներ, կը ներշնչես դուն մեզ նոր յոյսերով, նոր երգերով:

Դուն եղար անտո՛ւն բանաստեղծ, անօթեւան, թափառական: Մեր կոտորածէն ետք, հայ «որբերուն աղօթք»ը սորվեցնող քերթող. մաթո՛ղթ հրապարակուած ու քու հայրական շրթներով, արտասանեցիր անոնց փոխարէն՝ 2003-ին «Երկիրք, կ'ուզենք քեզ մեր վերեւ ունենալ՝

Ձի հող կ'ըսուի թէ մեր ծնողները կ'ապրին, Ու մենք կարօտն ունինք անոնց ժպիտին...»

Միայն ժպիտի՞ն, ա՛հ, միայն ժպիտի՞ն...:

Ու մինչ սփիւռքի ցաւն եղող որբերէն անդին, Արագածի կանթեղին յարեցիր աչքդ, տեսար թէ հոն հայրենիքդ ինքզինք կը վերագտնէր ու կը ծաղկէր զարնան նման, ցաւեցար որ «քէն ես ըրած, քիչ մը ատեն, - մինչեւ երէկ -» եւ ըսիր՝

«Տարբեր ես դուն մեր երագէն.- աւելի՛ լաւ.

Աւելի լաւ՝ կ'ըսեմ, այո՛, անգիրջ, անգութ,

Ձի դատակնիքն է չեղածին՝ փա՛ստն ըլլալուդ...»:

Ահա նորէն պատերազմ, բայց այն տարբերութեամբ որ մեր հայրենիքի գինուորները հերոսաբար կը յաղթէին, եղբայրաբար օգնելով խաղաղասէր ժողովուրդներուն: Մայիսեան գեղեցիկ առաւօտ մը կը

մտնէին անոնք ոճրապարտ թշնամիին որջը... Բայց աւա՛ղ, ամիս մը ետք քու մահէդ:

Ապրէիր դուն, վարպե՛տ, ու տեսնէիր յաղթանակը մեր հերոս մարտիկներուն:

Ապրէիր ու տեսնէիր վերադարձը բազմահազար Հայերու, դէպի երկիրն Արարատեան:

Տեսնէիր եւ այդ ըլլար ապրո՛ւմ քու մէջդ, ըլլար քերթուած:

Ապրէիր, եւ դուն ալ այդ հազարաւորներուն հետ կեանքիդ վերջին օրերուն դուն քեզ գտնէիր հայրենի կարմիր հողին վրայ, վերագտնէիր ինքնութիւնդ վերջնականօրէն, չբանտուէր հոգիդ Անհունին ուղղած երկտողիդ մէջ, թէ՛ «Ժայռերու մէջ զիս հող մ՛ըրիր, արգաւանդ

Եւ այդ հողին շիթ մը անձրեւ զլացար»:

Այլ՝ քեզմէ ներս վերածնէր մէկ նոր շարքը Արարատեան Դաշտի երգերուն, վերատին ծնունդովը նոր Հայուն:

Ու կը հաւատանք քեզի հետ սիրելի վարպետ, որ... պիտի նոր Մարդը ծնի Բանաստեղծի մը երգէն սիրոյ ցատումի:

Ու պիտի գայ այն Օրը, երբ նորածին մարդկային սերունդներու հաւաքական յոռի ըմբռնումներէն, ի սպառ պիտի ջնջուին հետքերը Մամոնային ու Նեոին, բոլոր կուռք-չաստուածներուն, ու պիտի վերածնի Գիտակցութիւնը ԻՍԿԱԿԱՆ ՆՈՐ ԱՍՏՈՒՄ ՈՅ, նման այն Արդար Արեգակին, որ բոլորիս շնորհուած Լոյսի Առաւօտն է, Բանն է ու Բանականութիւնը, էն ու էութիւնը... Անսկիզբ եւ Անվախճան: Մէրը անվերջակէտ ու գերազնիւ զգացողութիւնը համամարդկային:

... Գիշեր է տակաւին: ... Ու կը հասնին ինծի ԶԱՅՆԵՐ ԼՌՈՒԹԵԱՆ ՄԵՋ... Կը յորդին անոնք գիրքերուս էջերէն ու կ'ալեկոծեն ներաշխարհս:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՅՔԻ ԱՄԵՆԱՇԱՏ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ ԹՈՒՐՔԵՐՆ ԵՆ»

Շարունակում է 5-էն

նի տարածքում իրականացող լայնածառալ շինարարական աշխատանքները: Ուղղակի շփոթահար են լինում թուրքական պատուիրակությունները թանգարանի ընդարձակումը տեսնելով: Բանն այն է, որ հարկըրամեակին ընդառաջ թանգարանի ցուցադրությունները 2, 5 անգամ մեծանալու են: Ցառք սրտի, թանգարանի նկատմամբ անառողջ մտեցումներ ունեն նաև մեր որոշ հայրենակիցներ:

- Կրկին հետախուզական նկատումներով:

- Եւ, եւ: Ինչ-որ մարդկանց՝ եւ՝ այստեղ, եւ՝ սփիւռքում, չգիտես ինչու խիստ անհանգստացնում են թանգարանի անընդհատ աշխատանքը եւ գրանցում արդիւնքներն ու յաջողությունները: Չէի ցանկանալ մեկնաբանել այս սոցիոլոգիկ տեղի վերաբերմունքը:

- Ասացի՞ր հարցումն եմ՝ ֆիլմ նկարահանում է, թե ոչ: Մամուլում էլ վերջերս կարծիք եղաւ, որ Հայոց ցեղասպանութեան թեմայով համաշխարհային կինոարտադրութեան որեւէ կենտրոնի հետ մէկ համատեղ գեղարուեստական ֆիլմը՝ համաշխարհային որեւէ աստղի մասնակցութեամբ, շատ ակնկալ կ'անէր, քան բազում գիտական աշխատութիւնները: Ձեր կարծիքը:

- Ես այդպիսի համեմատություն չէի անի, որովհետեւ դրանով կը նսեմացնէի մի քանի սերունդների կատարած գիտահետազոտական աշխատանքը: Բայց, եթէ այլ հարթութեան մէջ դիտարկենք՝ ֆիլմն ունի իր ազդեցութեան մեծ ներուժ: Բաւական է մէկ-երկու ֆիլմ, որոնցով կարելի է ասել ամէն ինչ: Այդպիսի բացառիկ ֆիլմ, որով մենք կարողանանք ներկայացնել Յեղասպանութիւնը ողջ աշխարհին, ցառք, դեռ չունենք, իսկ նկարահանումներն էլ ունեն տեղական նշանակութիւն:

- Հարաւոր է, որ թանգարանը ՀՀ ազգային կինոկենտրոնին ֆիլմի պատուէր իջեցնի:

- Հայոց ցեղասպանութեան թանգարանին ստիտուտը գիտահետազոտական հիմնարկ է եւ գործում է ԳԱՀ համակարգում՝ որպէս եւ ցուցադրութիւն ներկայացնող, եւ գիտական հիմնարկ: Այնուամենայնիւ, աւելի շատ մեր գործունէութեան բաղադրիչը գիտական ցուցադրութիւններ կազմակերպելն ու դրանք սպասարկելն է, որքան էլ շատ են պահանջում մեզանից: Եւ ունենք այն, ինչ ունենք մարդկային ռեսուրսների տեսանկիւնից, չնայած թիւը կարծիք կայ, թէ

ահռելի ռեսուրսների ենք տիրապետում, այն դէպքում, որ ունենք 15 գիտաշխատող: Եւ այս պահին ես կարող եմ ընդամենը խօսել թանգարանի գործունէութեանը աջակցող մի քանի՝ երեք-չորս սփիւռքահայ անհատների մասին, որոնց իմ խորին երախտիքն եմ յայտնում, եւ նաեւ՝ Հայաստանի կառավարութեանը, որոնք թանգարանի ցանկացած կարիքի պարագայում դրական է արձագանքում:

- Ի՞նչ ցուցադրութիւն է պատրաստում թանգարանը 2015-ին:

- Միայն մշտական գիտական ցուցադրութիւնը լինելու են 1/100 յարաբերակցութեամբ: Լինելու է բացարձակապէս նոր տեխնոլոգիաներով յագեցած թանգարան: Եւ 2015 թ. Ապրիլի 24-ին կը լինի նոր թանգարանային ցուցադրութեան բացումը, որն իր տարածքով, ինչպէս ասացի՝ 2, 5 անգամ մեծ է լինելու: Դա ամբողջը չի, ունենալու ենք 15 շարժական ցուցադրութիւններ, որոնք տարբեր խորագրեր են ունենալու եւ աշխարհի տարբեր երակներում մենք պատրաստ ենք դրանք ներկայացնել:

- Նոր միջոցներ ցուցադրութեանը հանելու՞ էք, նաեւ ինչ-որ 3D ձեւաչափի մասին էր խօսում:

- Մենք Հայաստան ենք բերելու թանգարանային նոր մշակոյթ: Լինելու են նոր ու ժամանակակից ցուցադրական հնարքներ, լինելու է նաեւ Ձեր մատնանշածը, լինելու են նաեւ touch screen-ներ, երբ մէկ հպումով կարող էք լուսանկարներ դիտել, այլ նյութերի ծանօթանալ եւ այն: Պատկերացնո՞ւմ էք դա ինչ է նշանակում: Ասեմ նաեւ, որ վերջին տարիներին թանգարանն իրականացրել է նաեւ ահռելի գիտահաւաքական աշխատանք, որի արդիւնքում թանգարանի ֆոնդերը կրկնապատկուել են. դրանք տասնեակ հազարաւոր բնօրինակ նիւթեր են, որոնք պահոււմ են թանգարանում:

Իհարկէ, թանգարանը դա անում է ուժերի գերագոյն լարման պարագայում: Բայց մենք գիտակցում ենք, որ միայն Միջերկրածովային բերդով պէտք է սահմանափակուել: Հիմա կարող եմ ասել, որ կը յայտնուեն շատ ուժեղ հայրենասէրներ, որոնք կ'ասեն՝ «բացարձակ ցուցադրութիւնից չետոյ», ես նոյն հարցը կարող եմ տալ իրենց՝ իսկ իրենք ինչ կարող են անել: Գոնէ մի բան կարող են անել, որովհետեւ տեւ, ցառք սրտի, այսօր դաշտում յայտնուել են խօսողներ ու քննադատողներ, որոնք պատրաստ չեն որեւէ լուրջ բան անելու:

ԻՆՉՆ Է ՎԱՏ ԵՒ ԻՆՉԸ՝ ԼԱՒ ՄԵՋ ՀԱՍԱՐ

Շարունակում է 6-էն

ների այն կախարդական շրջագծից, որն աւելի շուտ Երեւանն է գծել, քան Մոսկուան: Միջազգային իրաւունքի անկախ սուբիեկտ լինել նշանակում է իրաւունք ունենալ զարգացնելու յարաբերութիւնները ե՛ւ Արեւմուտքի, ե՛ւ Արեւելքի, ե՛ւ Հիւսիսի, ե՛ւ Հարաւի հետ: Մենք պէտք է կարողանանք ապացուցել դա մեր հիւսիսային դարաւոր բարեկամին, բայց նախ ինքներս պէտք է զգանք, որ լիակատար անկախ ենք: Ես բազմաթիւ անգամ եմ գրել՝ յարգիր ինքդ քեզ, որ յարգեն քեզ: Դիւանագիտութեան մէջ այլ կերպ չի լինում:

4. Մոսկուան ինքն է մեզ դնում քաղաքական ընտրութեան եւ միջազգային յարաբերութիւնների դիւերսիֆիկացման անհրաժեշտութեան առաջ: Սակայն այդ դէպքում բացառուած չէ, որ մեզ վրայ Հիւսիսից ճնշումն ուժեղանալու է: Դե ինչ, իսկական անկախ

խուժիւնը, որը հայերի դարաւոր երազանքն է եղել, հեշտ չի տրուում: Մէկ էլ՝ իսկական անկախութիւնը պահանջում է հրաժարուել ռուսամէտ կամ արեւմտամէտ լինելու քաղաքական գծից, որն այսօր փաստօրէն տրոհում է մեր հասարակութիւնը եւ կոտորակում նրա միասնութիւնը: Կանգնել մեկ ու միակ դիրքերի վրայ, որի անունն է «հայամէտ»: Սա այսօրուայ ազգային հրամայականն է: Այլ կերպ մենք տանուլ կը տանք:

5. Հայաստանը աշխարհաքաղաքական դիրքով, ուժեղ Սփիւռքով, ազգային ներուժով եւ ինտելեկտով կարող է լինել ե՛ւ Արեւմուտքի, ե՛ւ Ռուսաստանի հետ, ինչքան էլ որ վերջինս հակառակուի դրան: Աւելին՝ մենք ի վիճակի ենք կապող օղակ դառնալ այդ երկուսի միջեւ: Ես այդպէս եմ տեսնում Հայաստանի պատմական առաքելութիւնը ժամանակի եւ տարածութեան մէջ: Եւ դա պատրանք չէ:

ՀԱԼԵՊԻ ԱՌՕՐԵԱՅԵՆ

Շարունակում է 7-էն

Թաքսիները փոխադրական երեւակայական գիներ կը պահանջեն, ուրեմն՝ քալէ՛, Աստուած գոյգ ոտքեր շնորհած է քեզի: Արագ քայլերով կ'ողողուիմ տուն:

Արդէն հնչած է արձակման ժամը, մարդիկ կը հաւաքեն զանազան ապրանքներով բեռնաւորուած սեղանիկները, հեռուէն կը լսուի փշրուող զարկերու ձայնը: Հոգետունէն դէպի Սալիպէ երկարող նեղլիկ թաղերէն արագ կը քայլեմ, շուրջս ամալութիւն է: «Թըք-թըք-թըք... կրունկներուս ձայնը կը խեղդուի մօտակայ զարկերու

«ԻՆՉ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ...»

Շարունակում է 13-էն

Եւ իւրաքանչիւրը պատասխանատուութիւն մը ունիք ոչ միայն ներողութիւն խնդրելու ձեր սխալներուն համար, այլ նաեւ՝ ընդունելու, սրբազրելու եւ հատուցելու ձեր պատմութեան համար:

Բայց մինչ այդ ճշմարտութիւնը եւ անոր կանչը պիտի հետեւի իւրաքանչիւր անցողաբաժնի: Ալիծի գիրքերուն տեղադրումը «գուզադիպութիւն» չէ, այլ պատմութեան ճշմարտութեան եւ արդար հատուցման մէկ փոքր նմուշն է: Ալիծին գիրքերը վերադարձան հոն, ուր սկսած է իր պատմութիւնը, հոն, ուր կան նոյնիինքն իր՝ Ալիծին ակունքները:

Ճիշդ էս, Այֆել՝ը, այս ակունքները իրական են, եւ Ալիծ այս իրական պատմութիւնն է, որ կը պատմէ ու կը գրէ: Ասիկա գուզա-

ձայներուն մէջ, ամէն կողմ քարի մանրուքներ, փշրուած ապակիներ ու սառած կեանք: Թաղի մուտքին երկու գիւղերը փոքր ծածկի մը տակ կ'ծկուած կը հակեն:

- Բարե՛ւ, տղաք...
Ձէնքերը բարձրացնելով կը պատասխանեն բարեւիս: Տակաւին երկու տասնամեակ չբոլորած, զէնքի կոչուած մատղաշ տղաք են, որոնց մայրերը ինչպիսի խնամքով այս հասակին հասցուցած են գիրենք ու...
Յետոյ, չետոյ...
«Ամէն ինչի վերջը կայ», ու մենք անհամբեր կը սպասենք այս վերջին:

դիպութիւն մը չէ, այլ՝ իրական պատմութիւն, որ կը վերադառնայ իր իսկական ու հարազատ տունը: Թէեւ վերջացաւ Այֆելի հետ խօսակցութիւնը, բայց կան տակաւին հօրեղբօրս խօսքերը, որոնք գորաւոր կերպով լսելի են. «Ասոնք մեր Այնթապի պապենական տան կալուածաթողութեան են: Հայրդ եւ ես հոս ծնած ենք»:

Իւրաքանչիւր հայ իր ականջին ու հոգիին մէջ ունի այս խօսքերը. «Ասոնք մեր տունները եւ կալուածներն են: Մեր մեծ հայրերը եւ մեծ մայրերը հոս ծնած են: Ասոնք մեր հողերն են»:

Ասիկա արդէն հայուն այսօրուան օրակարգն է: Ծանաչումէն՝ պահանջատիրութիւն:

Ուրեմն «գուզադիպութիւն» չէ, այլ՝ պատմութեան ու ներկայ օրերու ճշմարտութեան եւ արդարութեան «տունդարձ»:

ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻՍՐՈՒԻ

Շարունակում է 8-էն

ցուցիչներ: Ան ըսաւ, թէ Փանոս Թիթիգեանը յատկանշող արժանիքներն էին՝ լայնահորիզոն տեսիլք, լաւատեսութեամբ բարձրագոյնին ձգտում եւ նուրբ հիւմոր, որոնց համադրումը մէկ անձի մէջ հոյակապ խառնուածքի մը հիմքերը կը կազմէին:

Դեսպան Կարէն Նազարեան «Մովսէս Խորենացի» մետալակիր Պրն. Փանոս Թիթիգեանի ազգային գործունէութիւնը բնորոշեց՝ Հայոց նոյնանուն Պատմահայրին յայտնի մէջբերումով՝ որ կը գովերգէ մեր ազգի փոքր անուէն ծնունդ առած մեծագործ անհատներու փայ-

լուն իրագործումները:

Շքանշանի պաշտօնական տուջութեանէն ետք, Պրն. Թիթիգեան հանդէս եկաւ գինք բնորոշող կուռ, հատու եւ գուսպ խօսքով: Ան շեշտեց թէ՛ ինք կը սեռի Կիլիկիոյ թագաւորութեան վերջին շառաւիղներէն հանդիսացող Քեսապէն, ըլլալով գաւազը հայրենասէր հողագործ համեստ ընտանիքի, կազմաւորուած Գալատիւրան գիւղի հորիզոնին տարածուող Ամանոսի լեռներուն ուրուագիծը ունենալով միշտ իր մտապատկերին վրայ: Նախ քան Հայաստանի Նախադահին եւ ի պատիւ իրեն կատարուած այս նախաձեռնութեան ետին կեցող պատկառելի անձնաւորութիւն-

ներուն ուղղուած շնորհակալութեան խօսքը, Պրն. Թիթիգեան ըսաւ, թէ՛ պատմութեան ընթացքին ոտքի մնացած ազգերը չեն յատկանշուի իրենց հողատարածքով, բանակներու հզօրութեամբ, ոչ ալ նոյնիսկ իրենց մշակոյթի պերճութեամբ, այլ իրենց տենչերով, փափաքներով եւ իտէպի մը հասնելու կամքով:

Առաջնորդ սրբազանը՝ Տէր Խաթակ Արքեպիսկոպոս Պարսամեան, իր փակման խօսքին մէջ ըսաւ, թէ մեծարեալը՝ Փանոս Թիթիգեան, իր կեանքի օրինակով

մեզի կը պարզէր մեր ազգի փառաւոր անցեալը եւ ներկան, թէ ուր էինք երէկ եւ ուր ենք այսօր: Մեր փայլուն եւ խոստմնալի երիտասարդութեան ի տես, կրնանք գիտնալ թէ՛ դէպի ուր կ'երթանք վաղը: Մեր շուրջ կան յուսատու եւ խանդավառող բազմաթիւ երեւոյթներ, որոնցմով պէտք է գօտեպնդուիլ եւ յառաջ ընթանալ ըսաւ, իր կարգին իր շնորհաւորութիւնները եւ գնահատանքը փոխանցելով Փանոս Թիթիգեանին:

Ա.Հ.

ԻՍ ԸՆԿԵՐ ՅՈՎԱԷՓԸ ԻՆՆՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ Է

Շարունակում է 14-էն

ծախու արարածին: Խորհրդային մտածողութեամբ, իբր խմբում պատշաճ քաղաքատիրական աշխատանք չտանելու համար Յով-սէփին ազատել էին խմբապետի դիրքից: Եւ յետոյ, արդէն երեսուն ու աւել տարիներ թեւակոխած Յովսէփը հրաժեշտ պիտի տար գործունեայ ֆուլթայոլին: Այդ ըն-թացքում աւարտել էր օտար լեզու-ների եւ նաեւ ֆիզիկական կուլ-տուրացի ինստիտուտները:

Սակայն Յովսէփի տարերքը սպորտն էր, նաեւ մարզչական աշ-խատանքը: Մարզեց Հոկտեմբեր-եան-Արմաւիր քաղաքի խումբը, որի խաղացողներն մի մասը հա-մալրեցին երկրի առաջնակարգ խումբեր: Հոկտեմբերեան գնացող պատմի ճամբորդելիս, մի ուղեւոր հարցրեց, որ ես իրենց խումբի մարզիչ Յովսէփի եղբայրն էի, ժպտալով պատասխանեցի . . . այո, երեւի արտաքին նմանութիւն էր նկատել: "Արարատ" առասպե-լական խումբի մարզիչ էր, որտե-ղից ճանապարհ էր բացուել դէպի նրա եօթնամասնական թուական-ների համաթիւթեանական յաղթա-նակները: Հայաստանի ֆուլթայոլի գլխաւոր մարզիչ եւ ապա ֆիզ-կուլտ կոմիտէի ֆուլթայոլի բաժնի պետ, կոմիտէի պետի տեղակալ եղաւ: Ֆուլթայոլային սպորտը եղաւ իր կեանքի տարերքը: Դեռ պիտի հրաւիրէին Սուրիա մարզչական աշխատանքի եւ Լիբանանի ՀՄՄ ֆուլթայոլի խումբը մարզելու: Կու-սակցական չէր, չէին արտօնել եւ միայն իմաստուն հայկագուն հայո-րդի՝ Զարուբեանի միջնորդու-թեան շնորհիւ գործողեցին: Այ-նուհետեւ միութեանական սպորտ կոմիտէն նրան գործուղեց Աֆ-ղանստան, որպէս մարզիչ ու դասա-խօս: Այս տղան չմըսեց արդեօք Ողիմպոսի բարձունքները մագլցե-լով, մի օր հարցրեցի՝

-Յովսէփ դու չե՞ս մըսում Ողիմպոսի գագաթին . . . :
Մուսա Լեռցիների հետ ճամ-բորդեց, Մելգոնեանում ընկեր ու բարեկամ եղաւ մեզ հետ, այդ բարեկամութիւնը շարունակուեց Հայաստանում, այն վերածուելով ընտանեկան յարաբերութիւնների: Մի օր մայրիկին հարցրեցի Յով-սէփը փոքրո՞ւց էլ գնդակ էր խա-ղում, ժպտուն ու խնդումբեմ մայ-րիկը թէ՛ "Ան մամա, պապա ըսելն ետքը գնդակ բառը ըսաւ" եւ իր

սիրած գնդակը գրկին կը քնանար: Մելգոնեանական յորդ սիրոյ յոյ-գերի աւանդով իր նաւի ընկերնե-րին եւ այստեղ բնակութիւն հաս-տատած նախկին բոլոր Մելգոն-եանցիներին իր ամէն շաբաթօրեայ առաջին օրուայ հեռախօսային արեւշատութեան բարեմաղթանք-ների ողջոյնն է յղում:

Հայրենիքը արժանապալել գնա-հատեց Յովսէփի անմնացորդ նուր-րումը երկրի սպորտի զարգացմանը, նրան պատուելով հայրենի ու համա-միութեանական "Սպորտի Վաստա-կաւոր Վարպետ եւ Վաստակաւոր Մարզիչ" տիտղոսներով ու մի քանի շքանշաններով:

Վազգէն Հայրապետն էր Յով-սէփին Մայր Տաճար՝ Վեհարան, հրաւիրել: Վազգէն Առաջին, որի դէմքից տիեզերական սիրոյ քնքշանք էր ծորում, խօսքն էր բարի ժպիտով հոսում, արդեօք նա հիմա հրեշտակի սպիտակ շղարշով չի՞ ճարտում Մայր Տաճարին իջած Յիսուսի լոյսի վրայ: Հայրապետը, մարզական նուաճումները համա-րել էր ազգի հպարտութեան դրսե-ւորում եւ ի՞նչ, հեռու երկրից ֆուլթայոլային համագեւտներ ու կօշիկներ էր ձեռք բերել, օրհնել նրանց, որ նրանցով անցաւ վագեն, յաղթանակներ նուաճեան եւ գոլեր, գոլեր խփեան հակառակորդների դար-պաններին: Յովսէփը Հայրապետի աջը համբուրելով, հաւաստել նրան բա-զում յաղթանակների նուաճում:

Եօթնամասուն տարեկանի սե-մին Յովսէփը Հրեշտակների քա-ղաք եկաւ՝ հարազատներին միա-նալու: Ժամանակն էր նստելու սեղանին, խոկալու ու յուշերը թղթին դրոշմելու: Թղթակիցը եղաւ իր դաւանած կուսակցութեան պաշտօ-նաթերթ՝ "Նոր Օր" լրագրին: Եր-կարաշունչ ու իմաստալից յուշերի շարք, սակայն տեսողութիւնը դա-ւաժանեց, եւ այժմ դադար:

Իմ ընկեր Յովսէփը իննսուն տարեկան է: Մի յախուռն ու իմաստ-նութեամբ յագեցած բեղմնաւոր կեանք: Մի կեանք՝ յորդած բարու-թեամբ, սիրով, ինչ որ կարող էր անմնացորդ տուել է, նրանց գոհու-նակ ժպիտը հոգեկան անդորրու-թիւն է պարգեւել իրեն: Թող նախախնամութիւնը հատուցանի քու բարի արարումները, երկար-երկար տարիների առողջ կեանք պարգեւի քեզ եւ ես էլ քու հարիւր ամեակին նորէն գրիչ վերցրած թղթին յանձնեմ մեր բարեկամու-թեան յուշերը:

ՀԱՅԻ ՄՐՏՈՎ ՅԱԻԵՐԺԱՆՕՍ ՍՍԱՐՈՅԵԱՆԸ

Շարունակում է 16-էն

Շրջապատողներս ցնցուած եւ հիացած էինք «մեծ երեխայի» հոգեկան այդ գեղումից: Աղջիկը վերջում իր հերթին զգացուած համբուրեց Սարոյեանի աջ ձեռքը:

- Օհ, - զարմանքով նայեց շուրջը, - Հայաստանի մէջ ալ վար-դապետ եղանք:

Մեքենայ նստելուց առաջ Սա-րոյեանին մօտեցաւ բանաստեղծ Գէորգ էմինը, ասաց.

-Պարոն Սարոյեան, այս երի-տասարդները պոլիտեխնիկ քոլե-ջից (ինստիտուտից) են: Ձեզ հրա-ւիրում են իրենց մօտ հանդիպման: Պոլիտեխնիկը իմ քոլեջն է: Յետոյ, պարոն Սարոյեան, սրանք կարգին, լուրջ մարդիկ, ինժեներներ են, էս համալսարանի բանասէրների նման զավգակ չեն:

-Ես մարդ ու գեվգեկը կը սիրեմ:

«Փնտրիւր բարին ամենուրէք... արթնացրու առաքինութիւն, ու սրտում էլ որ աշխարհի արսափնե-րից ու ամօթից գաղտնի ու տրտում թաքնուելիս լինի... Եւ քանի ապ-րում ես... ոչ մի բան չաւելացնես աշխարհի աղէտներին ու տիրու-թեանը, այլ ժպտայ կեցութեան անծայր խնդութեան ու զաղտնիքի հանդէպ»: Սարոյեանի խօսքերն են: Գեղարուեստական ճշմարտու-թեամբ, վեհ մարդասիրութեամբ ոգեշնչուած, լոյսով է լցուած նրա վիթխարածաւալ գրականութիւնը, որով էլ Մեծ հայը շարունակելու է ժպտալ «Կեցութեան անծայր խնդութեան ու զաղտնիքի հան-դէպ», յաւերժի ու անմահութեան հանդէպ:

ՏԵՐ ԿԱՆԳՆԻՆԷ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ

Շարունակում է 13-էն

րութեան կազմում գտնուող ժողո-վուրդների յոյների, հայերի, կա-պաղովկիացիների, ասորիների դա-րերով ստեղծած արուեստի ու ճար-տարապետութեան հարուստ ժա-ռանգութեան համադրումից ստեղծ-ուած արուեստն է, որը եւրոպացի-ների կողմից յայտնաբերուելով 19րդ դարում, այն անուանեցին պատմութեան թատերաբեմից հե-ռացած պետութեան անուանով, քա-նի որ մինչ այդ նրանք դեռեւս չէին աւելնուել բնիկ ժողովուրդ-ների պատմութեանն ու մշակոյթի առկալութեան բացայայտումներին:

3.- Ռոմանական ոճեր դա մի պետութեան, մի ժողովրդի ֆրանս-իացու, իտալացու կամ այլ ազգի ստեղծած արուեստի ոճ չէ, այլ համայն եւրոպայի ժողովուրդներին, իսկ ռոմանական-գոթական, ապա եւ վերածննդի ոճը եւրոպական տարածք ներթափանցած Հայ վա-նականների, վաճառականների, գաղ-թականների, ինչպէս նաեւ պաւ-լիկեան-թոնդրակեան աքսորեալ-բռնագաղթուածների առկալու-թեամբ, առանց տիրապետման, այլ ինչպէս անգլիացի հետազօտող պատ-մաբան է. Գիբբերնն է նշել. Պաւլիկ-եան շարժումը ցնցեց արեւելքը եւ լուսաւորեց եւրոպան: Ուստի, եզ-րակացուած է, որ ներկայիս թուրք-իայի տարածքում սելճուքեան ար-շաւանքներից սկսած, ինչպէս նաեւ 1453 թուից յետոյ իրականացուած արուեստն ու ճարտարապետական մշակոյթը հարկ է անուանել ԱՐ-ՄԵՆԻՉՄԻ արգասիք: Այն իր գար-զացման ոլորտը ընդարձակելով խոր ազդեցութիւն է ունեցել ռո-մանական, գոթական եւ վերածնն-դի ոճ հասկացութեան ստեղծման:

Այսօր, առկա է Հայերէն եւ օտարալեզու հիմնաւորուած ու փաս-տարկուած ուսումնասիրութիւններ, որոնք ցոյց են տուել պայտաձեւ կամարների, խաչուող կամարնե-րի, կամարային քիւլերի, ճակատ-ներում սիւնակամարների, որմնա-կամարների շարքի, սիւնախուրձե-րի, զարդաքանդակների օգտագործ-

ման բազմաթիւ ակնյայտ փաստեր, որոնք իրենց յօրինուած քային էու-թեամբ եւ նշանակութեամբ երբեք չեն գիշել վաղագոյն շրջանի ճար-տարապետութեան բնագաւառում օգտագործուած թոսկանական, Դոր-իական, Հոնիական եւ կորնթական սիւնակարգային (օրդերային) հա-մակարգով յօրինուած քային լու-ծումներին: Այդ իսկ առումով, անհրաժեշտութիւն է, որ վերոյիշ-եալ ճարտարապետական տարրերը ամրագրուեն որպէս Հայկական ճար-տարապետութիւնը բնորոշող յօ-րինուած քային տարրեր եւ դրանք տեսականօրէն արժեքաւորուելով տալ համապատասխան կարգավի-ճակ, ինչպէս դա արուած է Հելլե-նիզմի ոճի դէպքում, եւ այն բնո-րոշել որպէս՝ ԱՐՄԵՆԻՉՄ-ARMENISM ճարտարապետական ոճը արտայայտող յօրինուած քային ձեւամիջոցներ:

Այսպիսով, փաստարկուած է, որ Հայ-իտալական ճարտարապե-տական աւելնուութիւնները լուրջ հիմքեր եւ նախադրեալն են ունե-ցել, որը երեւում է մշակութային այլ բնագաւառների դժով առկա Հայ-իտալական սերտ կապերից եւ յարաբերութիւններից, օրինակ վե-նետիկի Միթիթարեան Միաբանու-թեան բազմաբնոյթ մշակութային գործունէութիւնը, իտալիայում Հայկական տպագրական արուեստի զարգացումը, Հայ գրողների, նկա-րիչների, դերասանների իտալա-կան թեմաներով բազմաթիւ ստեղ-ծագործութիւնները եւ այլն:

Իտալական մշակութային աւելնուութիւնների ընթացակարգում կարեւոր իրադարձութիւն էր Հա-յաստանի ԳԱ Արուեստի հաստա-տութեան եւ իտալիայի գիտական հաստատութիւնների հետ համա-տեղ 1975-1988 թուականների ըն-թացքում իրականացուած միջազ-գային գիտական համաժողովները, ինչպէս նաեւ Հայ ճարտարապետու-թիւն խորագիրով եւրոպայի եւ այլ երկրներում իրականացուած ցու-ցահանդէսները, որոնք եկան հաս-տատելու Հայկական շինարուեստի ուրոյն յատկանիշները:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռաձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
 626-354-5924 • vamedia@yahoo.com

www.massisweekly.com
Updated Every Friday



ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

Փառաստօն FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

SUNDAY SEPTEMBER

22, 2013

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

Live Music

Dancing

Art Work Exhibition

Kids Games

Armenian Food



To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938

Sponsors



ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC.



WWW.NAVACOIND.COM
1.800.628.2759



www.massispost.com